Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

4(721)
2026
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀՈՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ Է ԱՄՐԱՊՆԴԵԼ ՄԵՐ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԶՈՐԱՑՆԵԼ ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր Հայաստանում և սփյուռքի համայնքներում ոգեկոչում ենք Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության մեր սուրբ նահատակների հիշատակը, ովքեր անմահացան՝ իրենց հոգիներում անմար պահելով սերն առ Քրիստոս և առ հայրենին:

Ապրիլի 24-ը խորհրդանշորեն ամփոփում է մեր Ժողովրդի հավաքական տառապանքը, որի մեջ խտացված են մեկ և կես միլիոն մարտիրոսացյալ հայորդիների, հայրենակորույս, տարագիր ազգիս զավակների, մշակութային եղեռնի ենթարկված մեր վանքերի ու եկեղեցիների, ավերված բնակավայրերի հիշողությունները: Այդ ողբերգությունը, սակայն, չկոտրեց մեր ազգի ոգին: Մեր ժողովուրդը վերապրեց ցեղասպանությունը, ամենուր նոր կյանք վերընծյուղեց, վերահաստատեց հայոց անկախ պետականությունը:

Ապրիլի 24-ն ուխտի օր է՝ միահյուսված աշխարհասփյուռ մեր ժողովրդի պահանջատիրությանը, որը զերծ է թշնամանքից ու ատելությունից, ուղղված է արդարության ու ճշմարտության վերականգնմանը և ցեղասպանության արհավիրքի ուրացման բացառմանը:

Ցեղասպանության աղետալի դեպքերից հարյուրամյակ անց, երբ թվում էր, թե նման սոսկալի հանցագործությունները մնացել են անցյալում, ցավոք, նոր ցեղասպան գործողություններով հայաթափվեց Արցախը, բռնությամբ տեղահանվեցին ավելի քան 120.000 արցախցիներ: Այս ծանր կացության և առկա սպառնալիքների հանդիման, մեր նահատակների զոհողությունը մեզ պարտավորեցնում է ամրապնդել մեր միաբանությունն ու համերաշխությունը և հզորացնել հայոց պետությունը: Հիրավի, համազգային միասնականությամբ է, որ կարող կլինենք արդյունավորելու ջանքերը Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման և արգասավորելու քայլերն ու նախաձեռնությունները՝ հանուն ազգային առաջընթացի և խաղաղ ու անվտանգ կյանքի:

Աղոթենք և հայցենք, որ մեր նահատակ սրբերի բարեխոսությամբ խաղաղության երկնային շնորհները և մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողորմությունն ու սերը բաշխվեն համայն աշխարհին, մեր հայրենիքին և ժողովրդին այսօր և միշտ. ամեն:

ՑԱՎԸ ՉԻ ԾԵՐԱՆՈՒՄ

Ցավը երբեք չի ծերանում, և անցնող տարիները չեն կարող սպիացնել Հայոց մեծ եղեռնի արնածոր վերքերը: Ցավը կսպիանա, երբ վերջապես կլինի ցեղասպանողի ապաշխարումը՝ դրանից բխող բարոյական և իրավական հետևանքներով:

Իսկ դա անխուսափելի է անգամ Թուրքիայի հերքող կատաղության պարագայում: «Մարդկային արդարության ճակատին թքելու» փոխարեն միաբանվենք և ուժեղանանք, որպեսզի ի զորու լինենք բացառել ցեղասպանական նոր նկրտումները հայ ազգի նկատմամբ: Եվ ինչու չէ, վերատիրենք մեր կորսված հայրենիքին, որպեսզի մեր ավերված եկեղեցիներում ու վանքերում կրկին գոհությամբ հնչի «Տեր ողորմեա»-ն:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՐԿՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՏԵՎԵԼՈՒ ՍԽՐԱՆՔԸ

Մեզնից ոմանք դեռեւս չեն գիտակցում իմաստն ու տարողությունը այն սխրանքի, որը, թերեւս ակամա կամ բնազդաբար, իրականացրել են մեր հայրերն ու պապերը Ցեղասպանության ընթացքում եւ հետո: (Նկատի չունեմ այն թեթեւսոլիկներին, որոնք այս պահին ղեկավարում են, հույս ունեմ՝ ժամանակավորապես, մեր երկիրն ու պետությունը, եւ որոնք քիչ է մնում մահվան վկայական պահանջեն Մեծ եղեռնի՝ իրողություն լինելու, մեկուկես միլիոն հայերի նահատակված լինելու փաստը ընդունելու համար): Օտարազգի հետազոտողները, այդ թվում՝ թուրքեր, վաղուց են համոզվել, ընդունել հայ ժողովրդի դեմ թուրքական իշխանությունների նախածրագրած ու գործադրած ցեղասպան գործողությունները եւ, նույնիսկ, զարմացել, ինչպես անգլիացի պատմաբան Քրիստոֆըր Ուոքըրն է արձանագրել իր «Armenia. The Survival of a Nation» («Հայաստան. Գոյատեւումը մի ազգի») գրքում, մեր գոյատեւելու, վերապրելու իրողությամբ:

Իրոք սխրանք էր, մասնավորաբար արեւմտահայության կրած մարդկային, նյութական ու հոգեւոր կորուստներից, բռնագաղթերից, հայրենազրկումից հետո վերապրելու, որպես էթնիկ հավաքականություն աշխարհով մեկ տարտղնված լինելու պայմաններում գոյատեւելու, ազգային կյանք, եկեղեցի, դպրոց, ակումբ, որբանոց, բուժարան, այրիանոց, ծերանոց, դարմանատուն, մամուլ, նույնիսկ գրականություն ու թատրոն ստեղծելու իրողությունը:

Ես չեմ մտաբերում մեր ժողովրդի պատմության մեջ որեւէ այլ նախադեպ, երբ բնազդական ու գիտակցական այդպիսի մղումով եւ այդպիսի կազմակերպվածությամբ, իրարօգնության այդպիսի ոգով, այն էլ՝ նման դժնդակ պայմաններում, մեր ազգը փարված մնա ազգային լինելիության գաղափարին:

Եղեռնը վերապրողների առաջին եւ գլխավոր գործը ազգահավաքը եղավ՝ սկսելով որբահավաքով, որի առաջին ռահվիրաներից մեկը հանդիսացավ ամերիկյան բանակում ծառայած կրտսեր սպա, հետագայում «Որբերի հայրիկ» կոչումին արժանացած Ռուբեն Հերյանը, որի «Մեկ հայ որբուկ՝ անգլիական մեկ ոսկեդրամի դիմաց» ծրագիրը, որը կայանում էր արաբ ցեղախմբերի վրաններից հայ երեխաներին «գնելու» մեջ: Նրա եւ ուրիշ նվիրյալների, այդ թվում՝ շվեյցարացի, նորվեգացի, ամերիկացի եւ այլ ազգությամբ կամավոր բարեգործների ջանքերով հավաքված որբերի կենտրոնացումն էր դա Հալեպի, Արաբփունարի, Քամիշլիի (Սիրիա), Ժիբեյլի, Թրիփոլիի, Ռայաքի, Անթիլիասի (Լիբանան), Կիպրոսի, Հունաստանի Կորֆու կղզու, ինչպես նաեւ Ալեքսանդրապոլի (Գյումրի) որբանոցներում, աջակցությամբ ամերիկյան մարդասիրական Near East Relief կազմակերպության, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ու հայ եւ օտար այլ կազմակերպությունների, որոնց մեջ միշտ կարեւորագույն դեր է կատարել ամերիկահայությունը՝ հատկապես հայրենակցական միությունների միջոցով, որոնք հետագայում վճռական դեր ունեցան նաեւ Հայաստանում Հովի. Թումանյանի նախագահությամբ գործող ՀՕԿ-ի (Հայ օգնության կոմիտե) խողովակով, Պողոս Նուբարի նվիրատվությամբ կառուցված Նուբարաշենից հետո գյուղական ու քաղաքային բնակավայրերի ու թաղամասերի կառուցման գործում, ինչպես Նոր Քղի, Նոր Հաճըն, Նոր Խարբերդ, Նոր Այնթապ, Նոր Արմավիր, Նոր Արեշ, Նոր Արաբկիր, Կիլիկիա, Զեյթուն եւ այլ՝ բազմաթիվ ավանների կառուցապատման գործում: Իսկական հայրենաշինություն՝ գերազանցապես նախկին որբերի ձեռքով կառուցված: Նրանք էին, որ Թումանյանի ասած «ողբի հայրենիք, որբի հայրենիքը» ծաղկեցրին, բարգավաճ երկիր դարձրեցին, որը շուտով հանգրվան դարձավ հայրենադարձ հայկական կարավանների համար:

Որբահավաքից ու որբախնամ կառույցների ստեղծումից հետո օրակարգի գլխավոր հարց դարձան երեխաների կրթության եւ արհեստագիտության հարցերը: Դպրոցներ բացվեցին արդեն սփյուռքահայ դարձած խոշոր ու փոքր համայնքներում: Կարապետ Աղա Մելգոնեանի կտակով ՀԲԸՄ-ը Նիկոսիայում բացեց ամենակարեւոր կրթօջախը՝ Մելգոնյան հաստատությունն իր վարժապետանոցով, որը կարճ ժամանակում սկսեց ուսուցիչներ հայթայթել նորաբաց դպրոցներին, մինչ Բեյրութում, զուգահեռաբար, ՀՀ Առաջին Հանրապետության մեծանուն ղեկավարների՝ Աղբալյանի, Վրացյանի, Լեւոն Շանթի ջանքերով սկսեց գործել Համազգայինի ճեմարանը: Նույն գործառույթը, արդեն տասնամյակներ շարունակ, ստանձնել էին նաեւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության Դպրեվանքն ու Երուսաղեմի հայոց պատրիարքության ժառանգավորաց վարժարանը:

Զուգահեռաբար, արդեն 16-20 տարիքի հասած որբերին տրվել են արհեստներ սովորելու դասընթացներ՝ կոշկակարություն, ատաղձագործություն, դերձակություն եւ այլն, որպեսզի չափահաս որբերը աշխատեն, փող վաստակեն, ընտանիք կազմեն: Ուշագրավ էր մանավանդ՝ դեռեւս որբանոցներում գտնվող՝ նույնպես չափահասության տարիքի հասած որբուհիների հետ արհեստավոր այդ տղաների ամուսնության կազմակերպումը՝ փոքրիկ օժիտի նվիրումով: Երիտասարդ ընտանիքներ կազմելու, նոր սերունդ ստեղծելու սրտառուչ նախաձեռնություն՝ արդարեւ:

Ինչպես տեսնում ենք, դժվարագույն պայմաններում, Մեծ եղեռնից մնացած աղիտահար հայությունը, բնազդաբար եւ իմաստնաբար ցույց է տվել ինքնակազմակերպման, գոյատեւման, վերականգնման զարմանալի, հրաշալի կարողություն, որը դաս պետք է լինի մեր ապրող ու գալիք սերունդների համար՝ մեր ժողովրդին, հայրենիքին ու պետությանը դուրս բերելու աղիտալի ներկա ու գալիք վիճակներից, ծերբազատվելու աղիտաբեր համբակ կառավարիչներից, աշխատանքով եւ իմաստությամբ կերտելու իսկապես հզոր, իսկապես ուժեղ, իսկապես բարգավաճ եւ իսկապես արդար ու կենսունակ երկիր:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ
«ԱԶԳ» շաբաթաթերթ
24/04/2026

ԱԶԳԱՊԱՏՈՒՄ

ՀԱՅՐԵՆԻՔԸ ԲԱՌԵՐՈՎ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ

Անցել են շատ տարիներ, շատ, հարյուր հիսուն և ավելի տարիներ, և հայոց պատմության խոցող ու դաժան դրվագներով անվերջակետ տեսաժապավենը՝ այլևս նաև մեր իսկ իրական մաշկից, մեր հոգու ու սրտի ցավերից բխող ու նկարվող ժապավենը՝ նորօրյա իր զարհուրելի պատկերներով, ցույց է տալիս, մեզ իրական վկա դարձնում, թե ինչպես է կորսվել Հայոց Հայրենիքը այնօր, և ինչպես է սողալով կորչում, անհետանում, օտարին բաժին դառնում մի քրիստոնյա փոքրիկ սուրբ աշխարհ, ժողովրդիս, ազգիս, մեզ համար ՄԵԾ, շատ Մեծ Աշխարհը: Հարյուր հիսուն տարվա իրական, ակնառու, շոշափելի ոճրագործության փաստերի հիմքերով մի ողջ ժողովրդի կյանքի, մարդկային անպատմելի ապրումների անվերջակետ ժապավեն, որի վերջն ու ավարտը չեն ուրվագծվում իր տեսակով եզակի տեսասկավառակի անհաշվելի շերտաշարում: Տեսասկավառակ, որ բովանդակում է մի ողջ ժողովրդի երեքհազարամյա կենսագրությունը: Ազգի կենսագրություն, որի անունն է Պայքար, ազգանունը՝ Կռիվ, անունը՝ Մահ, անունը՝ Կյանք, անունը՝ ազգի գեների հավերժության իրավունքի համար մշտապես ու անդադրում մղվող պայքար, որի հաղթական, բաղձալի ավարտի նշմարները մշուշների մեջ են, հորիզոնի չերևացող հեռուներում: Իսկ մեր հորիզոնն այսօր անսանձ կրակների բոցերի մեջ է: Եվ Հույսը, Հույսն այն է, թե հրե կրակներից ու բոցալի կաթսայից նորից պիտի ելնի, ծնվի Ոգեղեն Հայի մի նոր Կերտվածք, մի նոր, ավելի խիզախ Հայկ, ավելի խիզախ Տարոնների ու Տիգրանների, Փիրումյանների կուռ շարք, որ կարթնացնի, քաջալերանքի կոչ կանի իր Գերդաստանին, Հայոց Ածուի շարքերին, նրա ձեռքը սրի հետ կտա նոր ԲԱՀ ու ԳՐԻՉ և նոր ՈՒԽՏԻ մատյան՝ երկիրը չթողնելու, երկրում ապրելու և այն զորացնելու: Եվ այսօր, հենց այսօր, հենց հիմա՛ թող ծնվի այդ Հայկը, այն Հայկը, որն իր ռունգերի մեջ զգում է ՀԱՅ աղխի հառնումը նահատակությունից ու մահից: Հաբեթանց ՏԱՆԸ, Թորգոմի որդուն, նրա ծոռներին ՍԱ է բաժին հանվել և ասվել, որ ՆՐԱՆ, հենց նրան՝ Հայկին է բաժին տալիս լեռների մեջ ծվարած այս ՀՈՂՆ ու նրա գոյության պայքարը, որ Հայոց Հայրենիքն է սա, որ նրա որդիները կռվող են ու դիմացկուն, որ նրանք քուն ու դադար չեն ունենա իրենց բաժին արված Օրրանը հավերժ պահելու համար:

Եվ ասվել է՝ պահեցե՛ք երկիրը ձեր ու շատացե՛ք: Այսօր ժամ՝ լինել-չլինելու, ժամ՝ ոգու արթնացումի, ժամ՝ Ազգային ոգու նոր կռման ու նոր հառնումի:

Չէ, հոգնել, երկնչել չկա, իմ հա՛յ ժողովուրդ, հոգնել չկա, քանզի մաքառումով ու պայքարով Հայի ԱՆՈՒՆԸ պահե՛լն է մեր Ազգային դափնին, ազգերի բազմագույն շքերթի մեջ մեր Գույնն ու Որակը՝ Ազգայինի որակի նշանով: Այսօր, վաղը, թե ապագան ամենից անհաս Լուսապսակին, ազգերի հարատևման ամենաանհաս թագուգահին հասնելու կարողությունն ու ունակությունն է մեր նախապապերից մեզ բաժին հանվել՝ Նոյից, Հաբեթից ու Թորգոմից՝ փոխանցվել ՀԱՅԿԻՆ: Էն գլխից, ի վերուստ. դաժան որոշում ու վճիռ ժողովրդիս, ազգիս համար, բայց անգին ու լույսի մաքրության որոշում:

... Եվ արդեն քանի՞ հազարամյակ. ու մենք հլու, խոնարհ ծառան ենք Ի վերուստ մեզ տրված այդ որոշման, որ ունի հպարտ ու անհաս մի վսեմ ԱՆՈՒՆ՝ Հայ ու Հայաստան: Խարբերդցի հայ, շուշեցի հայ, հադրութցի հայ, Մարաղայի հայ, մշեցի հայ, Ուտիք աշխարհի հայ..., Կորսված հայրենիքի բոլոր անկյունների հայեր, նույն ցավ ու դավի կրող, նույն ձեռագրով հոշոտված, առանց բնօրրանի մնացած հայեր...

Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ այսպես դասավորվեցին իրողությունները՝ մի քայլ առաջ, տասը քայլ՝ հետ: Այսպես եղավ հարյուր հիսուն տարիներ առաջ և այսօր, որ այսչափ խելք ունենալով՝ չունեցանք խելքի այն չափաբաժինը, որ նրա՝ ավարառուի ձեռագրին լավագույնս տիրապետեինք ու ավելի հաղթական, վայելուչ ձեռագրով պատասխանեինք: Եղավ այսպես, քանզի հայրենապաշտության ձեռագիրը մեր շատ խայտաբղետ էր՝ ազգային թույլ ներդաշնակությամբ. խելոքները շատ էին, իսկ բոլորը միասին՝ նվիրյալների շարքերի կողքին՝ նաև անկարգ, նյութապաշտ շարքերով: Եվ սա՛ է ճշմարտությունը Վասակից ու Մերուժանից, ռես Ավետիսից ու Մխիթարի գլխին սուր քաշած ստահակներից մինչև այսօր: Արծաթն ու շահը, փառքն ու աթոռակռիվը սպանում, ոչնչացնում են քո մեջ ապրող երբեմնի հերոսին, երբեմնի ազգապաշտին, երբեմնի ազնիվ հային:

Եվ մի՞թե բանականությանը հասու չէ կամ դժվար է գիտակցել, թե որն է անցողիկը, որն է մնայունը. չէ՞ որ դժվար չէ յուրացնել ամենից տարրական գոյաբանաձևը. Մարդը մահկանացու է, նրա արած-թողածը՝ մնայունը:

... Ավա՜ղ, հավասարվեցին, նույն հավասար հարթակին հայտնվեցին դար առաջ թուրքահպատակ՝ ազատության տենչով լեցուն, կուռ շարքերով մարտնչած, ավա՜ղ ապարդյուն ընկած հայդուկ-նվիրյալ՝ հարյուր-հարյուր Գևորգ, Անդրանիկ, Չաուշ տղաների և Հայրենիք ազատագրած, հաղթանակի բերկրանքն ու վայելքը ժողովրդին, ազգին ընծա բերած Արցախյան գոյամարտի տղաների դափնիները: Ընկան ցեխի, մրի մեջ, մրոտվեցին, նրանց կերտած խիզախումի պատվանդանն ընկավ, որի երբեմնի անչափելի խորությունն ու շքեղ բարձրությունը դարձավ լոկ Հուշ, Հուշապատում, հարթակ, որ վսեմ իրողությունից, բարձունքից իջավ հատակ: Ընկավ մի հզոր բերդ՝ դառնալով վերացական երեք կամ հինգ դասագրքային միտք:

Եվ տնքում է հողը Հայոց, լացում, մռնչում է հողը Հայոց՝ մեր անցյալ բոլոր սերունդների, քաջարի տղաների, ծեր ու մանկանց, հայոց որդոց ու մայրերի մարմիններով, նրանց արյամբ ժայռ ու Բերդ, Ամրոց դարձած հողը հայրենի: Ո՜վ գիտե, գուցե ճշմարտություն է, որ հողը հիշողություն ունի, ո՜վ գիտե, բայց մեր դեպքում՝ այո: Մեր հողը հիշողություն ունի. ճակատագրի բերումով հայիս ազգային գեներն արյամբ մայր հողին շաղախվել, այնքա՜ն են շատացել հայրենի հողի մեջ... Հիշողություն, որ մարմնավորվել, Շունչ ու Լեզու առած՝ խոսում, աղաղակում է իր ինքնության, իր պատկանելության, իր գոյության, իր պայքարի մասին: Հարյուր և ավելի տարիներ Հայիս պայքարը չգտավ իր ցանկալի հանգրվանը, չգտավ այդ պայքարի շարքերում հաճախ աննկատ ու հաճախ էլ անտարբեր վկաների մեղքով: Իրենց՝ ազգային որակ փչացնող տեղերը գտան արծաթասերն ու փառամոլը, եսապաշտն ու մատնիչը...

Եվ նվիրյալների կամքով ու արյամբ բարձունքին հասած բերդերը երերացին ու ընկան: Միստիկ, վերացական է հնչում: Բայց մեր հողը, Հայոց հողը հիշողություն ունի: Մարդկային ու ազգային սխալներից հոգնած ու բզկտված մայր հողի միջից ցասումն է ելել, անթաղ մանչերի, մայրերի հայոց, երբեք չփակված ու բաց մնացած աչքերից նրանց՝ ցասումն է ելել... Հողիս լեզուն էլ դա՛ է. նա այդպես է դիմում աշխարհին: Իսկ որտե՞ղ են տերերը իմ: Եվ՝ Ո՜վ Անքննելի... Մարդկային մտքի ծայրերով ի՜նչ մտքեր ասես որ չեն անցնում: Չէ, չի նսեմանում միտքս, այն իրական, իրապես է դատում: Հարյուր տարի անց տնքում, աղաղակում է Էրգրիս հողը տանջահար: Այլևս վառված, մեր հին ոստան Վանի մոխրացած այգեստաններից, տանջահար բանաստեղծ Մահարու օրրան այգեստաններից, կրակե լեզուները ՄԱՅՐ գետն անցնելով հիմա էլ եկե՜լ-հասել են Գտչավանք ու Դիզափայտ, վառվում, մոխրանո՜ւմ են մեր ծննդավայր, մեզ սնած ու օրորած հայոց մարտնչող Արևելքի այգեստանները... Եվ այսօր Տիգրանակերտի Սուրբ Կիրակոս եկեղեցում փրկություն գտած Էրգրիս զարկվածների աղաղակները, նրանց լուռ տնքոցները ծուլվեցի՜ն-միախառնվեցին իմ Հադրութի, իմ Շուշիի, Իմ Մարաղայի, Մեծ Գետի, մեր կողմի կորսված Երևելիների ու Մայրերի, Հողվորի, Գոչի, մշակի ու մարտերում դեռ բաց աչքերով ընկած Տղաների հառաչին ու նրանց վերջին ակնթարթներին, վերջին մտքերին՝ նրանց անքննելի՝ ավելի խորացնելով Ազգային ցավի օվկիանոսը: Կիսված մի մարմին և զույգ արյունակից եղբայրներ՝ կորսված ու կռվող, իսկ ցավը նույնն է, իսկ ցավը մեկն է երկուսի համար, որ Երկիրն ապրի, որ Հայը ապրի: Տակավին ցավերի մեջ Գետի այս կողմից մեր ձայնն էլ հասավ Էրգրին՝ Միերի դռանը՝ թե որ կբացվի: Ճչում ու աղաղակում է Հայոց Աշխարհը և ուզում է հիշեցնել ու մատնանշել քաղաքակրթության մի չքնաղ օրրանի, մի չքնաղ աշխարհի մասին, մեռած մի Էրգրի և իր կյանքի ու գոյատևման համար մաքառող ու մարտնչող մեր Երկրի մասին:

Եվ լսո՞ւմ է Աշխարհը: Այո՛, մենք տեսնում և լսում ենք, որ Աշխարհը և՛ լսում է, և՛ տեսնում, բայց այդ Աշխարհն ավելի շատ իր գործերով է զբաղված, իր օգուտներն է ուզում քաղել բոլոր հնարավոր հնարներով, բոլոր տեղերում, անգամ կրակների միջից, որտեղ Աստծո արարած իր տեսակն է մահանում և մեռնողից էլ է ուզում օգուտ քաղել... Համոզվել, համոզվել ենք, որ սա է աշխարհիս Կարգը, որ դարիս մարդասիրությունը միայն կոչեր են, միայն գեղեցիկ շարադրված բառեր, լավագույն դեպքում՝ կարեկցանք, հուսադրում: Սրանից այն կողմ գործում է միայն քո Սուր եղունգի, քո հուժկու Սրի և քո Միաբանության օրենքը... Ու թե այդպես չէ. ո՞ւր է մեծանուն ու մեծատուն այրեր աշխարհին տված, աշխարհի իմաստնությունը մեծ չափաբաժնով ավելացրած մտքի շտեմարան Վարուժանի ու Մեծարենցի, աշխարհահռչակ Վիլյամ Սարոյանի, Անրի Վերնոյի, մեծ նկարիչ Արշիլ Գորկու, այլևս վառված ու մոխրացած այգեստաններում իր մանկությունն ըմբոշխնած մի հրաշք հայ մանուկի՝ մինչև աքսորավայրեր դառը կյանքի մրուրը մինչև վերջին ումպ տեսած ու դատարկած բանաստեղծի, բոլոր գալիք սերունդների համար դաս ու դասագիրք Արամ Մանուկյանի և քանի՜-քանի մեծանունների էրգիրը Հայոց: Մեծանուններ, որ քայլել, խայտանքով վազել են Մուշի, Խարբերդի, Կարինի, Բրգնիկի ու Բագառիճի ճամփաներով, խմել Վանի բերդի տակ հայերեն գլգլացող վարար աղբյուրից, որի ջրերն այսօր հոսո՜ւմ-հոսում, բայց այգեստաններին չեն հասնում... Այգեպանը մահացել, Այգեստանները այրվել-մոխրացել են արդեն, իսկ Հողը այնքան ջերմ է, այնքան տաք, որ Հողի հիշողությունը չի լռում: Չի լռում: Հայոց Հողի հիշողությունը բողոքում է...

Իսկ գուցե իր մեծ, բայց բզկտված ու բզկտվող՝ իր մյուս այս մեր ԿԵՍԻ համա՞ր է բողոքում և իր անկատար վճիռը որպես դրոշ պարզում մեզ: Հայրենի հողս տեսավ լռել, այսօր էլ շարունակում է լռել Աշխարհը արյունակից, ազգակից, հարազատ եղբոր ցավերին անտարբեր ու անհաղորդ: Ժայթքել ու չի հանդարտվում, ձայն տալով մեզ, Աշխարհին՝ թե ով է տերն իր, թե ինչու օտար ոտնահետքերից հեծում ու անտեր է մնացել: Էրգրիս հողը իր ցասումն է պարզել մեզ, որպես հրաման և իր ապրածի հիշեցում: Ապրել հայրենի հողի վրա և այն երբեք չլքել, չթողնել: Որ չկրկնվի մեծ ոճիրից մազապուրծ փրկված խարբերդցի այն վերջին վկայի՝ միլիոնի մեջ մեկ հայի պատմությունը, որը Խարբերդի իրենց թթենիների տակ թուրքի սվիններից սվինահարված իր հասակակից, իր փողոցի ու բակի ընկեր-տղաներից դիզված կույտի տակ նրանց արյունից արյունլվա, բայց փրկված, օվկիանոսի այն կողմը հասած և հազարների հետ 108 տարեկանում իր մահկանացուն կնքած Մեծ Ոճիրի վերջին վկաներից էր, ում ապրած 108 տարիները ունեին մեկ անուն՝ Հայրենիքի կարոտ և այդ տարիքում աչքերից խո՜ւրծ-խուրծ գլորվող արցունքներ... Նրանց թթենիների տակ թաղվեց հինավուրց մի ժողովրդի քաղաքակրթություն: Եվ նրա աղիողորմ արտասուքները հեռավոր Ֆրեզնոյից արյան երակներով եկան խառնվեցին իրենց տան բազմոցին նստած իմ Թալիշի, Իմ Հադրութի, Իմ Ջրաբերդի, Իմ Մարաղայի թթենիների տակ ընկած, խոշտանգված, անօգնական մեծերի ու փոքրերի սառած արտասուքներին: Բառերով չեն սիրում Հայրենիքը, բառերով չի ստացվում փրկել Հայրենիքը, չի ստացվում պաշտպանել: Ոչ մի պետություն ուրիշի փրկության համար չի զոհել իրեն և չի զոհելու: Դու ու քո ԱՐՄԱՏԸ պետք է կենսունակ լինեք, իսկ կենսունակությունը հանուն Ազգային Գոյի անդադրում աշխատանքն է, քրտինքն ու նվիրումը:

... Եվ մարդկային մտքի ու ձեռքի հզորության հատուցման ԺԱՄի մասին չպետք է դադարել մտածել: Ավելին՝ մտածելը, միայն մտածելը սին է ու խաբկանք, գործե՛լ ու գործե՛լ, առա՛ջ նայել, շատանա՛լ, շատանա՛լ ու զորանա՛լ է պետք. ՀԶՈՐԱՆԱԼ՝ ՄԵԾ խոսքը ՄԵԾ գործ դարձնելով: Իսկ հզորանալու համար պարզապես պետք է լինենք բարոյական արժանիքներով տոգորված, խմորված, առաքինի, ազնիվ ու հայրենապաշտ հայեր, մեր հողի վրա, Հայրենի հողի վրա ապրելով, իրապես գործով սիրելով ու պահելով Հայրենի օջախները: Եվ ինչքան ճիշտ է ասված Մեծն Ազգապաշտի կողմից. «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից»: Եվ կյանքը մեր քանիցս է ցույց տվել, որ ուրիշ ասելիք չկա, հարյուր անգամ փորձության ենթարկվելուց հետո՛ էլ: Ճիշտ է ասված՝ Հայրենիքն ապրում է, երբ դու նրա գրկումն ես, քո գոյությամբ, քո արարումով է ապրում քո պապենական ՏՈՒՆԸ, որի սյուների, օճորքի առաջ դու մեծ պարտավորություն, քո ծննդյան օրից քեզ տրված հրամանն ունես: Եզակի իրավիճակ, որի դեպքում հրամանը չի քննարկվում: Հարյուր և ավելի տարիներ առաջ ժողովրդիս տեսած ու ապրած արյունոտ ապրիլը, նույն լինել-չլինելու օրհասական մարտահրավերներով նորից եկել՝ ուղտի պես ոչ թե չոքել, կանգնե՞լ է մեր դռանը...

Չհուսահատվե՛նք, գոտեպնդվե՛նք, սերունդներին ամենօրյա աշխատանքով ու քարոզչությամբ ոգևորե՛նք ու չմոռանա՛նք, որ մեր ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻ ծանրակշիռ հուշասկավառակը հաղթությունների, խիզախումի դրվագներով լեցուն իր զույգն ունի՝ հերոսական, աննկուն, ազգային-համաժողովրդական ոգու դրսևորումների ծանրակշիռ Հուշապատում-պատմասկավառակը, որի ամեն մի էջ ի զորու է ամբողջական-դարակազմիկ ու դարակերտ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ տանել իր հետևից...

Ուրեմն՝ առանց ակնթարթ ու րոպե կորցնելու՝ ի գո՛րծ, ի գո՛րծ:

Լաուրա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Դպրոցի տնօրեն Արցախում, այժմ՝
ուսուցիչ Մայր Հայաստանում

ՈՒՂԵՐՁՆԵՐ

Մեզ ծանոթ և անծանոթ Թումանյանը

«ԱՆԲՈՒՆ ԿԿՈՒՆ»

Մեկնաբանում է գրականագետ Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Հովհաննես Թումանյանը մահվանից երկու ամիս առաջ մի գրառում է կատարել, որի մեջ ասում է. «Ես գիտեմ, մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն ու աղմուկ է հանելու, շատ բան է պարզվելու, տեսնելու են բոլորովին ուրիշ բան… գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել…, և ոչ ոք ուղիղը չի գտնելու, չի ասելու երբեք» (Նվարդ Թումանյան «Հուշեր և զրույցներ»):

Իսկ ականավոր թումանյանագետ Էդ. Ջրբաշյանը «Գրական թերթի» 1989թ. մարտի 11-ի համարում տպագրված իր մի հոդվածում գրել է, որ մինչև վերջերս մեր գիտական-գրական կյանքում իշխող «վերապահումների և մտավախության» հոգեբանությունը մեզ հաճախ ստիպել է առայժմ ընթերցողից թաքցնել բանաստեղծի ժառանգության առանձին էջեր՝ նրա վրա «ստվեր չնետելու» նկատառումներով:

2019թ. Ստեփանակերտում առիթ ունեցանք զրուցելու ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանի հետ: Մեզ հետաքրքրում էր, թե 150 տարի անց մենք լա՞վ ենք ճանաչում Թումանյանին: Զրույցը մասնավորապես ծավալվեց նրա «Անբուն կկուն» ստեղծագործության շուրջ:

Նվարդ Թումանյանի նույն «Հուշեր»-ում կարդում ենք, որ հայրը իրենց պատվիրել է չհրատարակել իր անավարտ գործերը, վառել: Բայց «Անբուն կկուն», որ անավարտ է, պահպանվել է և տպագրվել է շատ տարիներ անց:

Սամվել Մուրադյանն այդ առնչությամբ պատմեց հետևյալը.

«Անբուն կկուն» Թումանյանի վերջին գործերից է: Այն «Չարի վերջը» ստեղծագործության ընդարձակ տարբերակն է, որի երկրորդ մասը ոչ մեկը չէր հանդգնում տպագրել: Թումանյանի գործերի մեծ մասի լավագույն հրատարակիչ, նվիրյալ թումանյանագետ, ձեռագրագետ, բնագրագետ, հզոր բանասեր Արամ Ինճիկյանը «Անբուն կկուն» ստեղծագործության գրության ճիշտ տարեթիվը չի նշել, բայց ասում է, որ գրվել է 1917 թվականից առաջ, հավանաբար՝ 1915թ.: Նա, իհարկե, գիտեր երբ է գրվել, բայց ըստ երևույթին վախեցել էր գրել ճիշտ տարեթիվը. չէր ուզում կապել Հոկտեմբերյան հեղափոխության, Խորհրդային Միության կազմավորման հետ: Մինչդեռ Թումանյանը գրել է Խորհրդային Միության կազմավորման շրջանում՝ 1922թ.: Գրողի մերձավորները գիտեին ինչի մասին է: Դրա համար աղջիկը՝ Աշխենը, ստեղծագործությունն իր ձեռագրով նույն թանաքով արտագրել էր մեծ, սև տետրի մեջ, որպեսզի հոր ձեռագրով չպահվի: Թումանյանի ձեռագիրը չի պահպանվել, ինչ-ինչ հանգամանքներում կորել է: Ո՞վ է կորցրել՝ ոչ ոք չգիտի: Որովհետև վախեցել են Թումանյանին վնաս տալ: Ես և էդ. Ջրբաշյանն ենք «Անբուն կկուն» 1972թ. առաջին անգամ տպագրել «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում: Նոր էի այդտեղ մտել աշխատանքի, պատասխանատու քարտուղարն էի, երբ Ինճիկյանը բերեց այդ ստեղծագործության ձեռագիրը (Աշխենի ձեռքով գրված): Նա ու հանդեսի գլխավոր խմբագիր էդ. Ջրբաշյանը՝ երկու մեծ թումանյանագետներ, խորհրդակցում էին՝ ինչպես տպագրել: Վախենում էին գլավլիտից, և նրանց վախը անտեղի չէր: Գլավլիտն անմիջապես նկատել էր, որ դա խորհրդային պետության դեմ է ուղղված, քանի որ այնտեղ շատ վտանգավոր արտահայտություններ կային: Առհասարակ նրանում գեղարվեստական պատկերը շատ է բազմատարողունակ, բազմանշանակ, մանավանդ ակնարկները շատ թափանցիկ են, և իսկույն կարող ես վերագրել այսինչին կամ այնինչին:

Ես էի տպարանի հետ անմիջական կապը պահողը: Էդ. Ջրբաշյանը Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ էր, մի ոտքը կտրած էր, մի ոտքն էլ 14 տեղից վիրավոր, չէր կարող գնալ-գալ, ես էի հանդիպում ունենում այդ օրերի տպագրատան ղեկավարության հետ, ընդհուպ մինչև Կենտկոմ: «Անբուն կկուն» տպեցինք կրճատումներով: Ստիպված կրճատեցինք, քանի որ գլավլիտը, այնուամենայնիվ, հասկացել էր, թե ինչ է գրված: Իսկ ի՞նչ էին կրճատել: Գրվածքում ասվում է, որ աղվեսը կանչեց կկվին (նկատի ունենանք՝ աղվեսը Լենինն է, կկուն՝ հայ ժողովուրդը), թե գնա հավար գցիր, որ հեղափոխություն ենք անելու, ես էլ հրես գալիս եմ: Նկատի ունի հայ հեղափոխականներին: Մերոնք, չէ՞, գնացին հեղափոխություն արեցին և առաջին հարվածը վերցրին իրենց վրա: Հետո ասում է, երբ հեղափոխությունը հաղթանակեց, աղվեսը խոսեց ժողովուրդների եղբայրությունից, բարեկամությունից, սկսեցին համբուրվել շունը կատվի հետ, կատուն՝ մկան հետ, աղվեսը՝ աքլորի հետ և համբուրվելիս մեկի գլուխը մնաց մեկելի բերնում: Մեկն էլ բողոքում է, թե համբուրվելիս շրթունքը կծել են: Թումանյանը հասկացել էր, թե ինչ է կատարվում: Հասկացել էր, որ եթե համբուրվելիս մեկի գլուխը մնում է մեկի բերանում, նշանակում է՝ Հայաստանը և Ադրբեջանը երբ համբուրվում են, Ղարաբաղը և Նախիջևանը մնում են Ադրբեջանի բերանում, Հայաստանը և Թուրքիան որ համբուրվում են, ամբողջ Արևմտյան Հայաստանը մնում է Թուրքիայի բերանում: Սա է գլխավոր միտքը: Թումանյանական այս պատկերները խոր իմաստ ունեն: Այսպիսի հատված կա. կենդանիներից մեկը աղվեսին հարցնում է՝ բայց չէ՞ որ դուք ասում եք ազատություն է և հավասարություն: Աղվեսը պատասխանում է նրան՝ «…ազատություն է ամենքի համար, բայց ոչ քեզ համար: Եթե ամեն մեկն առանձին-առանձին իրեն ազատ զգա, գիտե՞ս դրանից ինչ դուրս կգա»: Այս հատվածն էլ հանեցին այն ժամանակ: Էլի բաներ կան, որ հանեցին, այս պահին կարող է չհիշեմ, տասնամյակներ են անցել:

Ստեղծագործությունը Թումանյանը դիտմամբ է գրել կենդանական հերոսներով, որ կարողանա կենդանիներին վերագրել իր մտածողությունը. ինչ որ ինքը մտածում էր, կենդանիների անունից է ասել: Բայց նույնիսկ այդ պայմաններում էլ վտանգը կար, և «Անբուն կկուն» տպագրվեց այն ժամանակ այդ կտորները հանած: Կկուն հայ ժողովուրդն է, որի ձագերին տարել կերել են գայլերը, այսինքն՝ բոլշևիկները և թուրքերը: Խլել են երկիրը, մնացել է անբուն, հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, Ղարաբաղից, Նախիջևանից, Ջավախքից զրկել են: Դրա համար էլ վերնագրել է «Անբուն կկուն»: Թումանյանական հանճարը հենց այդտեղ է: Ես հիշում եմ, որ Ջրբաշյանն ու Ինճիկյանը երբ խոսում էին, չէին ուզում, որ ես լսեմ, իմ ներկայությամբ բարձրաձայն այդ մասին չէին խոսում: Ես երիտասարդ էի, մտածում էին, որ իմ ներկայությամբ չի կարելի խոսել այդ մասին: Բայց իրար ասում էին՝ տես է, Թումանյանը ինչ հանճարեղ բան է գրել: Բայց չէին բացում, թե որն է այդ հանճարը: Ես էլ լսում էի: Տարիներ հետո վերլուծում էի, թե ինչ նկատի ունեին «Թումանյանի հանճարը» ասելով:

«Անբուն կկուն» ստեղծագործության մասին առաջին ուսումնասիրությունը հենց Արամ Ինճիկյանն է գրել: Դրանից հետո գրել է Էդվարդ Ջրբաշյանը իր մեկնաբանություններով, հետո՝ Հրանտ Թամրազյանը: Վերջինս գիտեր, որ տպարան ուղարկած ձեռագիրն ինձ մոտ է պահվում: Մահվանից առաջ ուզեց, տվեցի, բայց զավակները այն չվերադարձրին նրա մահվանից հետո: Ես այնտեղ նշումներ ունեի, տարան ու այդպես էլ չբերեցին:

Նրանցից հետո ես գրեցի, մեկնաբանեցի «Անբուն կկուն» իմ «Գրական հանգրվանների» 3-րդ գրքում: «Հովհաննես Թումանյան. հանճարը Ցեղասպանության միջով» ուսումնասիրությունը «Գրական հանգրվաններ»-ից մեկն է:

«Անբուն կկուն» վերլուծել եմ որպես Եղեռնը և հետագա ընթացքը պատկերող գեղարվեստական ստեղծագործություն: Թումանյանի 150-ամյակի առիթով ես նորից հնարավորություն ունեցա կատարել ճշտումներ: Ինչքան էլ ազատ մտածողության տեր լինենք, ինչքան էլ ասենք՝ ազատություն է եկել, ազատ խոսքի իրավունք կա, իմ մեջ դեռ հին ժամանակներից գլավլիտի մտածողությունը կա: Մտածում էի՝ սա որ գրեմ, ինչպե՞ս կընկալեն, ի՞նչ կլինի, ինչպե՞ս կհասկանան ինձ: Համենայն դեպս, աստիճանաբար եմ մաքրում այդ բանը և 2010թ. գրածիս վրա նոր ավելացումներ եմ արել ու հիմա էլ առանձին ուսումնասիրություն եմ պատրաստել:

Լևոն Հախվերդյանը ամենամեծ թումանյանագետներից է, Թումանյանին սիրող, գնահատողներից մեկը: Այդպիսի տպավորություն ունեն շատերը: Բայց «Հայ դասական գրողներ» մատենաշարով նրա կազմած Թումանյանի միհատորյակում գրողի հանրահայտ քառյակներից մեկը՝ «Երկու դարի արանքում, Երկու քարի արանքում, Հոգնել եմ նոր ընկերի ու Հին ցարի արանքում», աղավաղված է տպել: «Ցարի» փոխարեն «ցավ» է գրել, որ հանկարծ «բոլշևիկ» և «ցար» հակադրությունը չստեղծվի: Տեսեք մի տառի փոփոխությամբ Հախվերդյանը ինչ կեղծիք է արել, ոնց է այլանդակել Թումանյանի հանճարեղ միտքը: Այնպես որ թումանյանագիտությունը հիմա համեմատաբար ազատ զարգանալու և լավ մակարդակի հնարավորություններ ունի:

Ներկայացրեց
Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ՆԱԵՎ՝ ՈՒԽՏԻ ՕՐ

Տարիներ առաջ Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին Ապրիլի 24-ը սահմանեց որպես Սուրբ նահատակների հիշատակման օր, որովհետև իսկապես բազմաթիվ են պատմական վկայությունները, որ հենց Ցեղասպանության օրերին մենք ունեցանք նահատակներ և հատկապես հոգևորականներ և շատ քրիստոնյա հավատացյալներ, որոնք նահատակվեցին ոչ միայն որպես պարզապես հայ, այլ նաև որ մերժեցին առաջարկությունը ուրանալու քրիստոնեությունը, քրիստոնեական հավատքը և նահատակվեցին հանուն Քրիստոսի: Եվ այսօր առիթ ունենք, որպես Սրբոց նահատակների հիշատակման օր, խոնարհվելու մեր սրբերի և բոլոր նահատակների հիշատակի առջև՝ խնդրելու նրանց բարեխոսությունը մեր մեղքերի թողության համար, ինչպես նաև որ Աստված իրենց իմաստություն տա միասին, միախորհուրդ լինելու, և ամեն մեկն իր տեղում իր ծառայությամբ, իր նվիրումով զորացնելու մեր հայրենիքը, մեր պետականությունը: Այսօր ևս մեկ անգամ խոնարհվելով նրանց հիշատակի առջև՝ բոլորին վրեժխնդրության հրավեր եմ անում: Վրեժխնդիր լինել ապրելու միջոցով, ստեղծագործելու միջոցով, ուժեղ հայրենիք ունենալու միջոցով, ի վերջո՝ մեր ժողովրդի ապրելու, գոյատևելու, հարատևելու իրավունքը պահելու, պաշտպանելու միջոցով: Դրա համար եմ ասում՝ իմաստություն տա, որ ժողովուրդը միասին ու միախորհուրդ լինի: Եվ դրա մեջ շատ կարևոր է հավատքի կյանքը: Երբ ասում ենք հավատքի կյանք՝ նշանակում է ուղղակի հայտնվել խոնարհության, հեզության մեջ՝ թողնելու հպարտությունը, թողնելու անձնական շահը, անհանդուրժողականությունը, ատելությունը, թշնամանքը, համախմբվելու, ներողամիտ լինելու, հանդուրժող լինելու միմյանց նկատմամբ և միասնաբար այլևս մտածելու, որ պետք է այնպիսի հայրենիք ունենանք, այնպիսի հզոր պետականություն, որ ոչ մի ժողովրդի մտքով այլևս չանցնի մեզ ցեղասպանության ենթարկելու կամ կոտորելու:

Իսկապես, որպես կարևոր օր՝ Սրբոց նահատակաց բարեխոսությունը թող լինի մեր ժողովրդի միաբանության հետ կապված: Եթե պատմության էջերը բացեք, կտեսնեք, որ հենց ցեղասպանության օրերին մեր ժողովուրդը էլի անմիաբան էր. բոլոր քաղաքական կուսակցությունների մեջ խնդիր, վեճեր, անհամաձայնություններ: Նույնիսկ հավատքի առումով էլ մեր ժողովուրդը տկարացած էր, որովհետև շատ վկայություններ կան, որ այդ կիրակի օրը պատարագի ժամանակ թուրքերը, երբ բացում էին եկեղեցու դուռը, այնքան քիչ մարդ է եղել, որ ասել են՝ հայերի աստված մեռել է: Մեզ միաբանություն է պետք, և այսօրվա օրը լավ առիթ է միաբանվելու և ամեն մեկը մտածելու՝ իր ամբողջ կարողությունը, իր էությունը, բոլոր տեսակի հմտությունները ներդնելու մեր պետականության հիմքերը ամրապնդելու, ուժեղ հայրենիք ունենալու, ինքներս մեզ պաշտպանելու համար: Եվ կոչ եմ անում ամեն անգամ Ապրիլի 24-ը այդ առումով Ուխտի օր լինի լինի մեր ժողովրդի միաբանության, համերաշխության. կարևոր հանգամանք միասին առաջ ընթանալու, զորացնելու ուժեղ տնտեսություն, ուժեղ բանակ, ուժեղ հայրենիք ունենալու, որպեսզի կարողանանք հավատքով նաև, Աստծո օրհնությամբ և առաջնորդությամբ՝ որպես ազգ մինչև աշխարհի վախճանը կյանք ունենալու, գոյատևելու և հարատևելու:

ՊԱՏԱՐԱԳԻՉ

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-185

ՄԵԾ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ 178-ՐԴ ՏԱՐԻՆ

Աբովյանը հայոց գրերի գյուտի ու Ավարայրի ճակատամարտի շարունակությունն էր նոր ժամանակներում:
Սոսկ անհատ չէր նա, ժողովրդի հոգեկան ներքին ուժերի խտացումն էր,
որ բռնկվեց, բոցավառվեց ու դարձավ
մեր պատմության աստեղային ժամերից մեկը:
Վահագն Դավթյան

Երևանի Խ.Աբովյանի տուն-թանգարանը հերթական ազգանվեր նախաձեռնությամբ հանդիսատեսին հրաշալի անակնկալ մատուցեց՝ նվիրված Մեծ լուսավորչի առեղծվածային անհետացման 178 և «Վերք Հայաստանի» պատմավեպի ստեղծման 185-ամյակներին: Ծրագիրը ներառում էր բազմապիսի միջոցառումների շարք. «Վերք Հայաստանի» պատմավեպի ծեռագիր տարբերակի ցուցադրություն՝ Գրականության և արվեստի թանգարանի հետ համագործակցությամբ, գրական դատ՝ Աբովյանի անհետացման վարկածների բացահայտում՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության հետ համագործակցությամբ:

Շեմքից ներս մտնողը չէր կարող չնկատել թանգարանի աշխատակիցների ջանքերը, որ ներդրվել էին այդ օրերին՝ նոր ու թարմ շնչով ներկայանալու հանդիսատեսին:

Ժամանակավոր ցուցադրության ցուցասրահում ներկայացված էր հայ գրականության մեծերի խոսքերը՝ ձոնված Աբովյանին և նրա «Վերք Հայաստանի» վեպին: Ցուցադրության գլխավոր առանցքում 185-ամյա «Վերք»-ի բնօրինակ ձեռագիրն էր՝ որպես պատմական հիշողություն և սրբազան մասունք:

Հյուրերը ուշադրության պակաս չունեցան մշակութային այդ հյուրընկալ օջախում:

Տուն-թանգարանի տնօրեն Արևիկ Ստամբոլցյանը, ողջունելով ներկաներին, ընդգծեց, որ այդ օրը իրենք նվիրական երկու առիթ ունեն՝ Խ.Աբովյանի առեղծվածային անհետացման 178-րդ տարին և «Վերք»-ի ստեղծման 185-ամյակը, որի մեկնարկը տրվում է հենց այդ պահից:

Այդ օրը՝ հին տոմարով ապրիլի 14-ին՝ 178 տարի առաջ, անհասկանալի հանգամանքներում անհետացավ հայ ժողովրդի երախտավոր զավակ Խաչատուր Աբովյանը: Այդ անհետացումը առայսօր շարունակում է մնալ մեր գրականության, մշակույթի պատմության ամենաառեղծվածային ու ցավալի էջերից մեկը: Ինչպես Նիկողայոս Ադոնցն էր ասում, այն մարդը, որը խաղաղ պիտի հանգչեր փառքի թավշյա բարձերին, կորավ անհայտության մեջ՝ անասելի մորմոք թողնելով հարազատների ու բարեկամների սրտերում: Շատերը փորձեցին լուծել այս խորհրդավոր անհետացման կնճիռը, սակայն իզուր, նույնիսկ մի ամբողջ կյանք նվիրեցին ոմանք՝ լուծելու, բացահայտելու առեղծվածը, բայց անարդյունք:

Տնօրենը միաժամանակ շնորհակալություն հայտնեց միջոցառմանը ներկա ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արշալույս Գալստյանին՝ նրա աջակցության ու պատրաստակամության համար: Այնուհետև ներկայացրեց ցուցասրահում դրված «Վերք Հայաստանի» վեպի ձեռագիր օրինակը, որը իր հեղինակի պես ևս շատ դժվարին ճանապարհ է անցել: Առաջին անգամ տպագրվել է անհետացումից 10 տարի անց՝ նրա աշակերտ Գևորգ Աբիմյանի կողմից, իսկ հետագայում՝ խորհրդային գրաքննության պայմաններում, հնարավոր չէր վեպն ամբողջական տեսքով տպագրել: Ահա թե ինչ գրոհվանքով է իր վարժապետի մասին պատմում Գևորգ Աբիմյանը. «Վարժապետս շատ դասեր չուներ Գավառական դպրոցում. ազատ ժամերին մեզ հետ էր պարապում՝ իրա օթևանում: Աշակերտներս ճաշում էինք նրա տանը, կերակուր եփողը, հացի պատրաստություն տեսնողը Էմիլիա կինն էր: Ինքը Աբովյանցը մեզ հետ ճաշի չէր նստում: Նրա մոտ գնացող առաջին աշակերտը ես էի: Նրանից հետո, իրար նայելով, Թիֆլիսի ունևոր անվանի գերդաստաններն իրենց զավակներին ուղարկում էին Աբովյանցի մոտ՝ Ներսիսյան դպրոց կամ գիմնազիա տալու փոխարեն: Աշակերտներս թվով 20-26 հոգի կլինեինք: Նրա օթևանը մեզ հազիվ էր տեղավորում. ողջ օրը լինում էինք Աբովյանցի տանը…

… Աբովյանցը պանսիոնի աշակերտներիս անվանում էր որդեգիր: Բոլոր աշակերտներս նրա Թիֆլիսից հեռանալուց ետն էլ առանձին քաղցրությունով էինք հիշում նրան՝ նրա զարմանալի բարեսրտության համար, ամենիս վրա հոր տպավորություն էր թողել: Նա ամեն ջանք թափում էր, որ աշակերտներս ուսման մեջ թերի չմնանք, որևէ բարձր տեղ շարունակելու գնանք, մանավանդ եթե հնար ունենք, գնանք Դորպատ, ուր իրեն լավ ընդունել, պահել էին: Իր սուղ միջոցներից անգամ չէր խնայում ճանապարհածախս տալ, եթե աշակերտներից մեկը գնում էր Մոսկվա կամ Պետերբուրգ: Նրա պաշտոնակից ուսուցիչների չար նախանձն իրանն արեց և սիրելի վարժապետիս ոտի տակը փորեց, մնում էր նրան Թիֆլիսից հեռանալ, ուր այնքան քրտինք էր թափել: Նա մեկնեց Երևան 1843թ. օգոստոսին՝ հետը տանելով մեր սերն ու արտասուքը: Սիրելի Աբովյանցի խրատն աշակերտներիս միշտ այն էր, որ պիտանի լինենք մեր խեղճ ազգին, այսինքն՝ ժողովրդին: Մեզանից ամեն մինը յուրովի ձգտել է հետևել այդ խրատին-վարժապետի ցուցումին: … Հետագայում քանի՜-քանի՜ պարտաճանաչ, բարեխիղճ դասատուների պաշտպանել եմ, քանի՜-քանի՜ աղքատ ընդունակ պատանիների օգնել եմ՝ թոշակ նշանակել տալով: Այդ ե՛ս չեմ արել, այլ Աբովյանցի ներշնչած ոգին…»:

Հետագայում, Գևորգ Աբիմյան երախտագետ աշակերտը, Դորպատից վերադառնալով, պատվական հայ Ֆոնդոյան Հովսեփի հետ միասին, Աբովյանի հեռանալուց 10 տարի անց՝ 1858թ., տպագրում է իր վարժապետի «Վերք Հայաստանի» վեպը: Միայն 1984 թվականին գրականագետ Պիոն Հակոբյանի ջանքերով լույս տեսավ վեպը՝ ամբողջական տեսքով, որում ներառվեցին նաև ընծայականը և «Զանգի» հավելվածը:

Վեպի հիմնական ուղերձը հավիտենական, հավերժող Հայաստանն է: Այն Խ.Աբովյանի լուսավորական ծրագրերի խտացումն էր: «Վերք»-ը մեր նոր քաղաքակրթության շրջանի բացառիկ դրսևորումներից է, որով ներշնչվեցին մեր հետագա գրողները: Աբովյանի դպրոցը շատ բեղմնավոր հետևորդներ ունեցավ:

Օրվա միջոցառման ամենատպավորիչ մասը գրական դատն էր՝ նվիրված Աբովյանի առեղծվածային անհետացման խնդրին, որը մեծ պատասխանատվությամբ ու հիմնավոր առարկումներով, փաստարկներով ներկայացրին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության անդամները (ուսանողները տարբեր կուրսերից էին): Դատը վերաբացվում է հայ ժողովրդի պահանջով: Դատին «ներկա» էին Նիկողայոս Ադոնցը, Ակսել Բակունցը, Պիոն Հակոբյանը, Եղիշե Չարենցը, Վարշամ Ավետյանը, Աբովյանի կինը՝ Էմիլիան և այլք: Դատն ընթանում էր դատական գործընթացի բոլոր կանոններով: Յուրաքանչյուր մասնակից ներկայացնում էր իր վարկածն ու փաստարկները: Հիանալ կարելի էր նրանց խոսքի ու լեզվամտածողության դրսևորումներով: Վարկածները բազմաթիվ էին: Մեկը փորձում էր ապացուցել, որ Մեծ լուսավորիչը գաղտնի մեկնել է Եվրոպա, տարվել Գարիբալդու ազատագրական պայքարով, մեկը առաջ է քաշում այն վարկածը, որ գրողը դարձել է դավադիր սպանության զոհ, մյուսը թե՝ աքսորվել է Սիբիր, քանզի նրա անունը կար ցարական չինովնիկների ցուցակում, մեկն էլ այն համոզման է, որ Աբովյանը գիտակցված հեռացել է դեպի անհայտություն…

Գիտական հիմնավորումներով ու փաստարկված հակադարձումներով կազմակերպված դատական գործընթացը այդպես էլ չկարողացավ տալ գլխավոր հարցի՝ Խ.Աբովյանի անհետացման առեղծվածի ճիշտ պատասխանը, որովհետև ոչ մի փաստարկ նրա անվանը չէր հարմարվում: Ի վերջո, դատավորը փակեց «գործը» և Աբովյանին ճանաչեց Հավերժ ներկա:

Պատահական չեն Ավետիք Իսահակյանի խոսքերը՝ նրա անհետացման հետ կապված. «Ժողովրդի իմաստուն բնազդը նրան չի մեռցրել: Քարաշատ Հայաստանը նրա վրա քար չգցեց, որովհետև նա չի մեռել. նա գերեզման կունենա միայն հայ ժողովրդի հետ, իսկ հայ ժողովուրդը, ինչպես ամեն մի ժողովուրդ, հավիտենապես անմահ է: Նա երբեք չի մեռնի»:

Դատն ավարտվելիս Աբովյանի դերակատարը հայտարարեց. «Ինչքան հայորդին հայերեն խոսի, այնքան իմ խիղճը արթուն կմնա…»:

Թանգարանի տնօրենությունը, բարձր գնահատելով ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողների կազմակերպած ներկայացումը, բոլոր մասնակիցներին պարգևատրեց շնորհակալագրերով և հուշանվերներով:

Իրենց գնահատանքի խոսքն ասացին նաև ԵՊՀ դասախոսներ Արծրուն Ավագյանը և Սամվել Մուրադյանը:

Արծրուն Ավագյանը, դիմելով ներկաներին, մասնավորապես նշեց, որ հիացած է ուսանողների ներկայացրած դատի գաղափարով ու բովանդակությամբ, ինչն էլ իրեն մղեց արտահայտվելու ուսանողների և ընդհանրապես օրվա միջոցառման կազմակերպիչների ներդրած տքնաջան աշխատանքի վերաբերյալ: Ուսանողները ցուցաբերեցին խոսքի բարձր կուլտուրա և իրենց նպատակին հասնելու մեծ պատասխանատվություն, ինչն էլ գնահատելի էր դահլիճի կողմից: Ուրախությամբ արձանագրեց, որ մեր երկրում աճում է խելացի ու կիրթ երիտասարդություն:

Ուսանողների հասցեին իր հիացմունքն արտահայտեց նաև Սամվել Մուրադյանը՝ առանձնացնելով հատկապես նրանց գրագետ խոսքը Աբովյանի առեղծվածային անհետացմանը նվիրված դատավարության ընթացքում: Այո՛, Աբովյանը մեր գրականության անչափելի մեծությունն է, որին անդրադարձել են մեր մյուս մեծերը՝ Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Հովհաննես Շիրազ, Կոստան Զարյան, Վահան Տերյան, Նիկողայոս Ադոնց, Պիոն Հակոբյան, Վարշամ Ավետյան… Արարատը մեր հավերժության խորհրդանիշն է, և պատահական չէ, որ Չարենցը նրան ուղեկցեց դեպի մեր սուրբ լեռը («Դեպի լյառը Մասիս»).

… Գիշերը չէր քնել:- Քրքրել էր թղթերը,
Երկար թերթել թերթերը բազմաթիվ.-
Օրագրեր, գրքեր, ձեռագրեր,
Գրություններ՝ մնացած դեռ Դորպատից:
Կյանքի նման իր բարդ,
խառնիխուռը, լիքը,
Իր խոհերի նման բազմապիսի,
Խոհեր՝ ուղղած դեպի
սերունդները գալիք,
Ծրագիրներ՝ կիսատ, կամ
սկսված հազիվ,-
Ու՞մ էր թողնում բոլորը, ո՞ր
սիրեցյալ սանին,
Որպեսզի վաղը նա այդ
թերթերից
Գուրգուրանքով հաներ իր
խոսքը կենդանի
Եվ խնամքով հանձներ
տպագրյալ գրին…
……
Եվ այժմ, մենավոր
նա գնում էր կրկին, դեպի հեռուն
այն լուրթ,
Դեպի լյառը անհաս ու
վեհանիստ,-
Դեպի գագաթը բարձր, որ իր
ժողովուրդը
Համարել է հավետ իր գոյության
խորհուրդը,-
Որ ճաշակի այնտեղ
հավերժական հանգիստ …

Վահան Տերյանի գնահատականը ևս հաստատում է, որ Աբովյանը հայ ժողովրդի հավերժահոս պատմության քաղցր ու անլռելի կարկաչն է. «Մի՞թե Արարատյան դաշտը Հայաստան չէ, և նրա ոգին՝ Աբովյանը, այդ Հայաստանի ամենալուսեղեն մի բեկորը չէ: Որպիսի՞ Հայաստան եք ուզում կառուցել դուք, որ չեք ուզում ճանաչել այդ հոգեղեն Հայաստանը»:

Միջոցառմանը մասնակցում էին նաև Աբովյանի շառավիղներից Ջուլիետա Սահակյանը, Աբովյանի կոռը՝ Սոֆյա Պեպլոզյանը, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արշալույս Գալստյանը, որը շնորհակալություն հայտնեց տուն-թանգարանի աշխատակիցներին՝ ջերմ ու բովանդակալից համագործակցության համար:

Թանգարանի տնօրեն Արևիկ Ստամբոլցյանն էլ իր երախտագիտությունը հայտնեց և՛ ուսանողներին՝ գեղեցիկ ներկայացման համար, և՛ Գրականության ու արվեստի թանգարանի աշխատողներին՝ «Վերք Հայաստանի» պատմավեպի բնօրինակ ձեռագիրը տուն-թանգարանին ժամանակավորապես տրամադրելու համար:

Այսօրվա խառնիճաղանջ իրականության պայմաններում, երբ շատերը հոգևոր սննդի քաղց են զգում, շատ պահանջված են դառնում այսպիսի միջոցառումները, որոնք որոշ չափով մեղմում են ոգու սովը:

Այսպես շարունակում են Աբովյան մեծության առեղծվածային կյանքի բացահայտմանը միտված քննարկումները:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

ՕՇԱԿԱՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼՈՎ ՈՒ ՆԵՐԿԱՅՈՎ

Մեր երկրի ամեն մի անկյուն պատմական մեծ անցյալ ունի, ամրոց ու տաճար՝ նախաքրիստոնեական ու քրիստոնեական, այլ սրբավայրեր, կամուրջ ու բնակատեղիներ... Կան առավել հայտնի վայրեր, որոնցում տեղի են ունեցել մեր պատմության առանցքային իրողություններ:

Օշական. գյուղ է Հայաստանի Հանրապետությունում՝ Արագածոտնի մարզկենտրոն Աշտարակից քիչ հարավ՝ Քասախ գետի ափերին: Ինչպես բոլոր բնակավայրերը, Օշականն էլ ունի իր պատմությունը, պատմական ու ժամանակակից հուշարձանները: Հաճախ ենք լսում կամ կարդում, այսպես կոչված, «Օշականի ճակատամարտը» պատմական իրողության մասին: 336թ. տեղի է ունեցել ճակատամարտ

Մազքթաց Արշակունիների և Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակի միջև: Ճակատամարտն ավարտվել է հայոց զորքի հաղթանակով: Այս առթիվ 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բյուզանդը գրում է. «...Երբ թշնամիները տեսան նրա հարձակումն իրենց վրա, քաղաքից (Վաղարշապատից. *Ջ. Ը.*) դուրս եկան, փախան դեպի առապարը, Օշական բերդի կողմը՝ ապավինելով այն անապատին ու քարքարուտ տեղերին: Սաստիկ պատերազմ եղավ: Եվ Հայոց զորավարի (Վաչե Մամիկոնյան *Ջ. Ը.*) նիզակակիցները, որ էին Բագրատ Բագրատունին, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիները, Ամատունյաց տոհմի նախարար Վահանը, Վարազ Կամիկականը, հասան, խփեցին, կոտորեցին ալանների, մասքութների, հոների ու մյուս ազգերի զորքերը...» (Փավստոս Բյուզանդ «Պատմություն Հայոց». էջ՝ 76-77: Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968թ.): Օշականը հայտնի է նաև ռուս-պարսկական 1826-28 թթ. պատերազմի տարիներին տեղի ունեցած իրադարձություններով: Գյուղի տարածքում ռուս-հայկական զորքերը, Աֆանասի Կրասովսկու գլխավորությամբ, 1828թ. օգոստոսի 17-ին հաղթեցին պարսիկ Աբաս-Միրզայի բանակին:

Բայց և՛ մեր ժողովրդին, և՛ շատ օտարների Օշականը հայտնի է՝ կապված Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հետ: Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, որը 1996 թվականից Արագածոտնի թեմի առաջնորդանիստն է, գտնվում է գյուղի մեջ՝ Քասախ գետի ձախ ափին՝ հնգաթռիչք կամրջի հարևանությամբ: Ըստ պատմական մի շարք աղբյուրների՝ ժամանակակից եկեղեցին կառուցվել է 5-րդ դարում Վահան Ամատունի իշխանի կողմից կառուցված եկեղեցու տեղում: Հայոց Քերթողահայրը՝ Մովսես Խորենացին, որը եղել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից և նրա հանձնարարականով ընկերների հետ ուսման է գնացել Բյուզանդիա, երբ վերադառնում է, արդեն մահացել էին Ամենայն Հայոց 10-րդ կաթողիկոս Սահակ Պարթևը և Մաշտոցը: Խորենացին իր «Հայոց պատմություն» մատյանի ԿԸ «Ողբ» գլխում գրում է. «...Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեին իմ անիմաստ գիտությամբ և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ-շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքներում պարել, խիզախ և արագ շարժումներով, և առագաստի երգեր երգել,- այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով, նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն ու օրհնությունը...» (Երևան, 1990թ., «Հայաստան» հրատարակչություն, էջ՝ 236): Իսկ Մաշտոցի մահվան մասին Խորենացին գրում է. «Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո, մեհեկան ամսի տասներեքին, երանելի Մեսրոպն էլ այս աշխարհից փոխվեց Վաղարշապատ քաղաքում, գերազանցելով բոլոր առաքինի մարդկանցից, որպիսիք այն ժամանակ կային: Որովհետև ամբարտավանությունը և մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ և բարեմիտ լինելով, երևում էր բոլորին՝ երկնայինների սովորությամբ զարդարված: Որովհետև նա հրեշտակի տեսք ուներ, ծննդական միտք, պայծառ էր խոսքով, գործերով ժուժկալ, մարմնով փառահեղ, սովորություններով աննման, խորհրդակցությամբ մեծ, հավատով ուղիղ, հուսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրույթ» (էջ՝ 243): Ինչպես գիտենք, Սուրբ Սահակ Պարթևը մահացել է 439թ. սեպտեմբերի 7-ին, Բագրևանդի Բլրոցաց գյուղում, իսկ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը՝ 440թ. փետրվարի 17-ին (մեհեկան 13)՝ Վաղարշապատում: Ե՛վ Խորենացին, և՛ Մաշտոցի կենսագիր Կորյունը հետաքրքիր երևույթի մասին էլ են նկարագրում: «Ինչպես լսեցի բազմաթիվ և արժանահավատ անձերից, խաչի ձևով աղոտ լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հոգին ավանդեց: Եվ շուտով չանհետացավ այս շողքը, քչերին տեսանելի չեղավ, այլ՝ բոլոր բազմությանը, այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին» (Մ. Խորենացի «Հայոց պատմություն» էջ՝ 234-235): Կորյունը գրում է. «Եվ մինչդեռ Սրբի ձեռքերը կարկառված էին դեպի երկինք, խաչանման, լուսավոր շողավոր ձևով սքանչելի տեսիլ երևացայն ապարանքի վրա, ուր վախճանվում էր երանելին. և ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց: Եվ նա սրբերին սեր ու միաբանություն ավանդեց, մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ պսակեց և հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով՝ հանգավ» (Կորյուն «Վարք Մաշտոցի» էր 96-97, Երևան 2005, ԵՊՀ հրատարակչություն): Կորյունը, որը ներկա է եղել, հիշատակում է՝ այդ օրը Սրբի մոտ են եղել նրա աշակերտներից հոգևորականներ Հովսեփը, Թադիկը, զինվորականներից՝ Վահան Ամատունին՝ Մեծ Հայքի հազարապետը, Հմայակ Մամիկոնյանը (Վարդան Մամիկոնյանի եղբայրը), այլք: Պատմիչները նաև նկարագրում են, թե ինչպես են ներկա իշխանները որոշել որտեղ հուղարկավորեն Սրբին: Գրում է. «Վահանն ու Հմայակը, աշխարհական բազմության հետ, վերցրեցին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր ցնծություններով, վառած կանթեղներով ու... բարձրացան Օշական և այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին...» (էջ՝ 97): Սա վկայում է՝ դեռևս այն ժամանակ Օշականում եղել է Սուրբ-Մարտիրոսների հանգստարան: Խորենացին գրում է, որ կար 3 կարծիք՝ Սրբին հուղարկավորել կամ Տարոնում՝ իր ծննդավայրում, կամ Գողթնում, կամ Վաղարշապատում՝ սրբերի հանգստարանում: «Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որ ավելի ջերմեռանդ էր հավատով և հզոր էր մարմնով, քանզի պարսիկներն այդ ժամանակ նրան էին վստահել մեր Հայոց աշխարհի հազարապետությունը: Նա մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական: Եվ նույն լուսեղեն խաչի երևույթը դագաղի վրա գնում էր դեմ հանդիման բոլոր ժողովրդին, մինչև նրան հողին հանձնեցին Վահանը և նրա սպասավոր Թաթիկը, ինչից հետո նշանն աներևույթ եղավ: Իսկ եպիսկոպոսապետության աթոռին իբրև տեղապահ նստեց երանելի Մեսրոպի հրամանով նրա աշակերտը՝ Հովսեփ քահանան, որ Վայոց ձորից էր՝ Հողոցիմ գյուղից...» (էջ՝ 235): Հնարավոր է՝ Վաղարշապատից մինչև Օշական, որ իրարից շատ հեռու չեն, Սրբի մարմինը, մեծ թափորի ուղեկցությամբ, տարել են ձեռքի վրա: Երկնային շողքն ուղեկցել է թափորին: Արագածոտնը վաղ միջնադարում եղել է Ամատունի նախարարական տան եպիսկոպոսների տեսչության ներքո: Իսկ Օշականն Ամատունի նախարարների կենտրոն է դարձել Հայոց թագավոր Խոսրով Բ Արշակունու օրոք՝ 330-338 թվականներին: Նույն պատմիչները տեղեկացնում են՝ 3 տարի անց՝ 443թ., Վահան Ամատունին Մաշտոցի գերեզմանի վրա եկեղեցի է կառուցում: Կորյունը գրում է. «Իսկ երեք տարի անցնելուց հետո Վահան Ամատունուն հաջողվեց՝ քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար կանգնել տաշած քանդակած քարերով և տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը: Նա Քրիստոսի կենդանարար մարմնի ու արյան սեղանի համար վայելուչ, գույնզգույն ոսկով, արծաթով ու քարերով պայծառափայլ անոթներ պատրաստեց՝ ի հիշատակ, և մի տեղ հավաքված բոլոր սրբերի հետ Քրիստոսի խաչակրոն վկայի՝ երանելի Մաշտոցի մարմինը փոխադրվեց տաճարի գերեզմանը: Եվ նրա Թադիկ անունով աշակերտին՝ մի զգաստ ու բարեպաշտ մարդու, եղբայրների հետ, երանության հասած Սրբի համար սպասավոր կարգեցին՝ ի փառս

Աստծո» (էջ՝ 97): Սուրբ Մաշտոցի մահվան հաջորդ տարին իսկ սահմանվեց հատուկ տոն նրա հիշատակին. Սրբի գերեզմանը դարձել է ուխտատեղի:

Օշականի ներկայիս Սուրբ Մաշտոց եկեղեցու մասին հիշատակություններ են թողել նաև հետագա դարերի պատմիչները: Թովմա Արծրունի և Անանուն «Պատմություն Արծրունյաց տան» գրքում (Երևան 1985թ. ԵՊՀ հրատարակչություն) կարդում ենք. «Երբ այս ամենը կատարվեց, Սուրբ Սահակը, 120 տարի ապրելուց հետո, այս աշխարհից փոխվեց հրեշտակների կարգը: Սրբի մասունքները տարան ամփոփեցին Տարոնի Աշտիշատ ավանում, Սուրբ Հովհաննես Մկրտչի և Աթանագինես նահատակի վկայարանի տեղում: Վեց ամիս անցնելուց հետո, նույն տարում վախճանվեց նաև Սուրբ Մաշտոց վարդապետը: Հայոց նախարարների բազմությունը, Վահան Ամատունու ղեկավարությամբ, որն այդ ժամանակ Հայոց սպարապետն էր, խաչի ձև ունեցող լույսի ուղեկցությամբ տարան և թաղեցին Արագածոտն կոչվող գավառի Օշական գյուղում» (էջ 121): Առաքել Դավրիժեցի պատմիչը «Պատմություն» գրքում հիշատակում է. «Նաև Աստծու փառքի հոյակապ, լայնանիստ, բարձրապերճ տաճարը՝ Սուրբ Մեսրոպ մեծ վարդապետի հանգստարանը, այն Մեսրոպի, որ Հայոց գրերը գտավ. ինչպես որ նրա պատմության խոսքերն են ասում, թե նրան տարան ամփոփեցին այն գյուղում, որ անվանվում է Օշական: Արդ՝ Սուրբ Մեսրոպ վարդապետի այս տաճարհանգստարանի ողջ տանիքը վաղ ժամանակներից փլվել, նստել էր, միայն ավագ խորանն էր մնացել ծածուկ: Եվ Սուրբ հայրապետ Փիլիպոսն իր կաթողիկոսության ժամանակներում սկսեց այն ևս նորոգել, որ և արեց մեծ ծախսերով և աշխատանքով, մշակված քարով, մածուցիկ կրով մինչև ամբողջն ավարտեց մեր թվականի 1094 (1645թ.) տարում՝ ի փառս Աստծո» (Առաքել Դարվիժեցի «Պատմություն» 1988-«Սովետական գրող», էջ՝ 277):

Օշականի եկեղեցու ներսում եղել է արձանագրություն, որը Հովհ. Շահխաթունյանցի ընդօրինակմամբ այսպես է. «Ի թվականին ՉԼԷ(737+551=12882), ես՝ Գեշմարդս էի ամիրայ եւ Հաւիկս ձեռնաւոր թողաք զցբ Կարապետին այգեացն զԱւշականու, զՄիրինու զձեռնաւորին զհարկն, զինչ որ կայր...» (ՇՍ 79, ՎՏ 130. Ա. Ա. Ավագյան. Վիմական արձանագրությունների բառաքննություն. ԵՊՀ 1978 Երևան էջ՝ 164): 19-րդ դարում Գևորգ Դ կաթողիկոսը (1813-1882) ծավալել է շինարարական լայն գործունեություն: 1868-ին Վաղարշապատի Մայր Տաճարի արևելյան կողմում կառուցել է կցաշենք, որտեղ կազմակերպել է եկեղեցապատմական թանգարան, նորոգել է տվել Սուրբ Գայանե վանքը, այնտեղ կառուցել արևմտյան կամարակապ դարպասը, կառուցել է Մայր Աթոռի միաբանների բնակելի շենքերը, Բյուրականի կաթողիկոսական ամառանոցը, 1875-1879թթ. վերակառուցել է Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին և այլն:

Այժմ Օշականի եկեղեցու արևմտյան գլխավոր մուտքի վերին հատվածում սպիտակ մարմարե քարին կա հետևյալ արձանագրությունը. «ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՅՈ ՍՐԲԱՁԱՆԱԿԱՏԱՐ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ.Տ.ԳԵՈՐԳ Դ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑ Ի ՀԻՄԱՆՑ ԶԱՅՍ ԵԿԵՂԵՑԻ ՕՇԱԿԱՆ ԳԵՂԶՍ ԵՒ ԶԴԱՄԲԱՐԱՆ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՄԵՐՈՅ ՈՐ Ի ԱՄԱ. ՏՐՈՔ ՀԱՅՈՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՅԱՄԻ 1879 ԵՒ ՀԱՅՈՑ ՌՅԻԹ»:

1879 թ. հոկտեմբերի 21-ին Օշականի եկեղեցին օծվել է: Ամիսներ անց՝ 1880 թվականին, եկեղեցու հարավային կողմում, Վահան Ամատունու գերեզմանի վրա, կանգնեցվել է հուշակոթող՝ «ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ՝ ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ» գրությամբ: Իսկ 1884 թ. եկեղեցուն արևելքից կցել են երկհարկ, 8-սյունանի ռոտոնդայով պսակված զանգակատուն՝ գլանաձև ծավալով և Ավագ խորանից բացվող մուտքով: Մասնագետները գտնում են՝ սա բացառիկ է հայ եկեղեցաշինական ճարտարապետության մեջ: Այժմ եկեղեցու հարևանությամբ կա դպրատուն, որը կառուցվել է 1913 թվականին և հիմնանորոգվել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի առաջնորդությամբ՝ 1996-ին: Եկեղեցու ետնաբակում է գտնվում նաև հայ գրերի պուրակը և Մաշտոցի արձանը: Ամբողջը քանդակված է կարմիր տոֆից: 1997 թ. եկեղեցու արևմտյան կողմում Ժ. և Հ. Գաբրիելյանների բարերարությամբ կառուցվել է առաջնորդարանի շենքը (ճարտարապետ՝ Հ. Բաբախանյան): Սուրբ տաճարի պատերը ներքուստ նկարազարդվել են: Արևմտյան պատին Հ. Սինասյանի և Հ. Մամյանի «Փառք հայ գրի և դպրության» որմնանկարն է: Հարավային պատին կանգուն և ծնրադիր նետածիգ զինվորներն են, նրանց գլխավերևում՝ ուժի, հայրենիքի կենսունակության խորհրդանիշ թևատարած արծիվը: Հյուսիսային պատին պատկերված է Հայաստանի գարունը՝ ծաղկած ծառերով, զվարթ աղջիկներով և այլն: 1995թ. եկեղեցու արևմտյան կողմում կանգնեցվել է քառակող հուշակոթող՝ արևելյան կողին հայոց այբուբենն է քանդակված՝ տակը՝ Աստվածաշնչյան հայտնի «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» խոսքը՝ հայերեն գրված առաջին նախադասությունը: Հարավային կողմում արևային ժամացույց է և այլ գրություններ ու քանդակներ:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

ԿԱՐԵՎՈՐ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ

1972թ. նոյեմբերի 16-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր կոնֆերանսն ընդունել է «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանման կոնվենցիան»: Իսկ 1982 թ. Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը (ՀՏՎՄԽ անգլ.՝ ICOMOS), կարևորելով հուշարձանների ու տեսարժան վայրերի դերն ու պաշտպանությունը, ապրիլի 18-ին արել է առաջարկություն հատուկ օր ընդունել այդ առթիվ: Մեկ տարի անց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ նույն օրը՝ ապրիլի 18-ը, հայտարարվել է Հուշարձանների ու տեսարժան վայրերի պահպանման միջազգային օր: Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան վավերացրել է 1993 թ. սեպտեմբերի 5-ին:

Օրվա առթիվ Հայաստանի պատմության թանգարանի(ՀՊԹ) դահլիճում տեղի ունեցավ «Հուշարձան-համայնք փոխհարաբերությունները. հնարավորություններ և մարտահրավերներ» խորագրով պանելային քննարկում: Բանախոսությամբ հանդես եկան ՀՀ ԿԳՄՍ նախարարության Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ Հարություն Վանյանը և Երևանի պետական համալսարանի մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմաբան, մշակութաբան, հնագետ, պ. գ. դ., պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը: Քննարկումը վարեց ՀՊԹ գիտական գծով փոխտնօրեն Նժդեհ Երանյանը: Ներկա էին ՀՊԹ տնօրեն Դավիթ Պողոսյանը, աշխատակիցներ, հնագետներ, զբոսավարներ, ուսանողներ, թեմայով հետաքրքրվողներ: Ողջունելով ներկաներին՝ Ն. Երանյանն ասաց. «Մշակութային ժառանգության պահպանության ոլորտը գտնվում է շարունակական փոփոխության մեջ՝ արձագանքելով թե՛ ժամանակակից մարտահրավերներին, թե՛ նոր հնարավորություններին: Հայաստանում վերջին տարիներին համայնքների դերակատարման զգալի ակտիվացում է նկատվում՝ հատկապես ժառանգության պահպանության և հանրահռչակման գործընթացներում: Սա կարևոր զարգացում է, սակայն միևնույն ժամանակ առաջ է բերում համակարգման, մասնագիտական ուղղորդման և կառավարման նոր խնդիրներ»: Նշեց նաև՝ հաճախ պատմական հուշարձանների խնդիրներով զբաղվող գերատեսչությունների աշխատանքը, հատկապես վերականգնողական, վերակառուցման, նորոգման, ամրակայման և այլն, տեղի է տալիս քննադատությունների, հատկապես սոցիալական ցանցերում: Բերեց օրինակ Լոռու մարզի Ամրակից գյուղում գտնվող ռուսական եկեղեցու վերականգնումը, որն իրականացվել է 2025-ին: Իր խոսքում Հ. Վանյանը, շնորհավորելով ներկաներին Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա առթիվ, կարևորեց համայնքի և տեղի պատմական ժառանգության փոխհարաբերությունները: Ասաց. «Համայնքներում բնակչության կողմից հուշարձանների նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորելու, այդ ժառանգությունը գնահատելի դարձելու նպատակով կարիք կա, որ մարդիկ նախևառաջ ճանաչեն հուշարձանն ու իրազեկ լինեն դրա պատմական արժեքի մասին: Այս առումով շատ կարևոր է, որ հատկապես երիտասարդ սերունդը գիտակցի պատմամշակութային ժառանգության պահպանության կարևորությունը»: Անդրադառնալով Ամրակիցի հարցին՝ նշեց՝ այստեղ մոտեցումների հետ կապված՝ իրար հետ հարաբերելու հարց ունենք: Այսինքն՝ նույն համայնքում նախ պետք է ճանաչեն ժառանգությունը: Շատ հաճախ նույն համայնքում ապրողը չգիտի գիտական առումով ինչ կարևոր հուշարձան ունեն. ենթադրենք՝ դամբարանադաշտ, բնակատեղի... «Այս առումով որոշակի աշխատանքներ արվում են ԿԳՄՍ նախարարության կողմից համայնքներում: Իրականացվում են աշխատանքներ երիտասարդների, դպրոցականների հետ: Մի քանի տարի առաջ կազմակերպվել էին օլիմպիադաներ պատմական ժառանգության թեմաներով: Վերջին փուլին Լոռու մարզից մասնակցել են ավելի քան 200 աշակերտ, Տավուշի մարզից՝ 100-ից ավելի: Դրանք հաղթողներն էին, իսկ մասնակիցներն ավելի շատ էին: Կա մեկ այլ կարևոր նախաձեռնություն «Եվրոպական ժառանգության երիտասարդ ստեղծագործողների մրցույթ»-ը, որի շրջանակներում արդեն երրորդ տարին մասնակցելով՝ Հայաստանը հաղթանակ է գրանցում Եվրոպայում անցկացվող փուլում: Այս մրցույթում Հարություն Վանյանը կարևորել է պատանիների ընտրության ազատությունն ու հուշարձանների ընկալումը, դրանց վերաբերյալ նրանց յուրօրինակ մեկնաբանությունները: Երիտասարդներին տրվում է առաջադրանք՝ ներկայացնել իրենց շրջապատի ժառանգությունը՝ նյութական, ոչ նյութական, այսինքն՝ այն, ինչ նրանք համարում են ազգային ժառանգություն»: Հավելեց նաև՝ արդեն մեկնարկել է նոր ծրագիր. յուրաքանչյուր դպրոցի կցվել են իրենց տարածքի հուշարձանները, որի նպատակն է հուշարձանի պահպանությանն աջակցումը, տարածքի մաքրումն ու բարեկարգումը:

Համլետ Պետրոսյանը կարևորեց այն, որ համայնքներում արդեն գիտեն՝ մշակութային արժեք ներկայացնող նորահայտ գտածոների համար ում դիմեն: Փաստացի օրինակով ներկայացրեց Լոռու մարզի Լեռնահովիտ գյուղում գտնված քառակող քանդակազարդ կոթողի մասին, որն արդեն պատմության թանգարանի ցուցանմուշ է: Համայնք-հուշարձաններով զբաղվող իրավասու կազմակերպություն կապի համար կարևորեց նաև այն, որ նույն կոթողի ցուցադրության բացմանը ներկա էր լեռնահովիտցի կինը, որի բակում գտնվել էր կոթողը: Կարևորեց նաև այն, որ տարածքներում աշխատող հնագիտական արշավախմբերը համագործակցեն տեղի երիտասարդության, աշակերտների հետ: Օրինակ բերեց, որ այժմ Տավուշի մարզի Առաքելոց վանքում աշխատում են հնագետները, և նրանց հետ հաճախ համագործակցում են տարածքի աշակերտներն ու երիտասարդները: «Ժառանգությունը միայն հուշարձանը չէ. այն մարդ-հուշարձան հարաբերություններն են, որոնք ձևավորում են նաև այդ հուշարձանի մասին պատկերացումները»,- ասաց Հ. Պետրոսյանը:

Բանախոսության վերջում եղավ քննարկում: Ներկաները տարբեր խնդիրներով դիմեցին իրավասու անձանց՝ մեր երկրի տարածքում գոյություն ունեցող հազարավոր հուշարձանների խնդիրներին վերաբերող: Կարևորվեցին հուշարձանների մոտ ցուցանմուշների տեղադրելը, հները նորով փոխելը, առավել կարևոր հուշարձանների պահպանությունը, տեղացիների կողմից հուշարձանների վերանորոգումը, բարեկարգումը, այլ հուշարձանների տեղադրումը, որոնք խաթարում են հուշարձանի կարևորությունը և այլն:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

Սերունդ

ԱՐԴԵՆ՝ 10-ՐԴ ԱՆԳԱՄ

«Ճիշտն ասած, ինձ համար ամենահիշվող Աշոտ Նավասարդյանը ոչ թե խորհրդարանում էր կամ ՀՀԿ գրասենյակում՝ հարցազրույց տալիս, այլ «Էրեբունի» օդանավակայանում: 1992-ի գարունն էր՝ Աշոտն իր ընկերների հետ պատրաստվում էր ուղղաթիռով մեկնել ռազմաճակատ: Զինվորական համազգեստով էր, ինքնաձիգը՝ ձեռքին: Ուժեղ էր, ինքնավստահ, հպարտ: Եվ՝ ուրախ...»:
Արամ Աբրահամյան 29. 03. 2005թ.

Նույն պետական գործիչ Աշոտ Նավասարդյանի անվան Երևանի թիվ 196 հիմնական դպրոցում ավանդույթ է դարձել «Նավասարդյանական ասպետ» մրցույթ-խաղը՝ 5-րդ դասարանցիների մասնակցությամբ: Մեր ժողովրդի լավագույն զավակներից Աշոտ Նավասարդյանի ծննդյան օրվան նվիրված մրցույթ-խաղը և իր անվան կրթօջախում անցկացնելը նախաձեռնել է նույն դպրոցի տնօրենի տեղակալ Աննա Դավթյանը 2016 թվականին:

Քաղաքական, պետական գործիչ, ՀՀԿ հիմնադիր-նախագահ Աշոտ Նավասարդյանը ծնվել է 1950թ. մարտի 28-ին: Ազգային միացյալ կուսակցության անդամն ազգային ազատագրական ու անկախության գաղափարների համար ԽՍՀՄ տարածքում համարվել էր այլախոհ, երեք անգամ կալանավորվել և ընդհանուր դատապարտվել 17 տարվա ազատազրկման ու 5 տարի աքսորի: Կալանավայրերում անց է կացրել շուրջ 12 տարի, այդ թվում՝ 7 տարի բանտային և հատուկ ռեժիմի պայմաններում: Վերադառնալով աքսորից՝ 1989թ. «Ազգային ինքնորոշում միավորում» կազմակերպության խորհրդի անդամների հետ հիմնադրել ու ղեկավարել է «Անկախության բանակ» ռազմաքաղաքական կազմակերպությունը:

Մինչև մահը մեծ աշխատանքներ է կատարել նորանկախ հայրենիքի կայացման շեմին: Սրտի իշեմիկ հիվանդության պատճառով մահացել է 1997թ. նոյեմբերի 3-ին՝ 47 տարեկանում:

Մրցույթ-խաղին մասնակցեցին դպրոցում գործող 7 հինգերորդ դասարանների աշակերտները՝ յուրաքանչյուր թիմում՝ 6 հոգի: Թիմերը կոչվում էին հայ արքայական տոհմերի անուններով: Երվանդուներին արքայական տոհմի անունը կրում էր 5-րդ Ա դասարանը (դասղեկ՝ Հասմիկ Ղազարյան): Մասնակիցներ՝ Ալեն Մանուկյան, Գոհար Քցյան, Նարե Կիրակոսյան, Դավիթ Կարապետյան, Էվա Պետրոսյան և Ռոբերտ Հակոբյան: Արտաշեսյանների տոհմը ներկայացնում էր Իրինա Գրիգորյանի 5-րդ Զ դասարանը՝ Աշոտ Մանուկյան, Ինգա Սարգսյան, Ռուզաննա Հովսեփյան, Միեր Ալեքսանյան, Նատալի Գրիգորյան և Մարինա Քուրդօղլյան: Արշակունիներ անունով հանդես եկավ 5-րդ Դ դասարանը (դասղեկ՝ Արփի Ասրյան), մասնակիցներ՝ Հասմիկ Հայրապետյան, Արիանա Բաբայան, Գագիկ Մարգարյան, Ավետիք Չոլոյան, Նարեկ Կոշտոյան և Սամվել Ավուշյան: Հայոց Բագրատունի արքայական տոհմը ներկայացրին Աշոտ Նավասարդյանի դստեր՝ Արուսյակ Նավասարդյանի դասարանի սաները՝ Մարկ Մարգարյան, Միկա Ստեփանյան, Մարիա Օհանյան, Արեգ Լեո Գրիգորյան, Արինա Հայրապետյան, Լինա Փարեմուզյան: Կիլիկյան Հայաստանի 2 արքայական տոհմերից Ռուբինյանների անունով հանդես եկան Ռեգինա Մարգարյանի 5-րդ Գ դասարանի սաները՝ Ալեքս Սիրականյան, Միքայել Պեպանյան, Արտակ Գալստյան, Վարդուհի Բաղիյան, Գրիգոր Հայրապետյան, Միքայել Ճշմարիտյան: Հեթումյան տոհմի հետնորդները Կ. Ավետիսյանի 5-րդ Ե դասարանցիներն էին՝ Նելլի Արաբաջյան, Կարինա Բարոյան, Խաչատուր Խաչատրյան, Արեգ Հայրումյան, Նատալի Հովսեփյան, Քրիստիան Մելիքյան: 5-րդ Բ դասարանը կոչվում էր օրվա հերոսի՝ Աշոտ Նավասարդյանի անունով՝ «Նավասարդյանականներ»: Իր դասարանից Մարգարիտա Ղազարյանը թիմի կազմ էր վերցրել Աշոտ Ավետիսյանին, Գայանե Ասրյանին, Արսեն Հովսեփյանին, Սեդա Գալստյանին, Էլիզա Խաչատուրյանին և Ռաֆայել Միրզոյանին:

Մրցույթ-խաղը վարեց նախաձեռնող ու

հեղինակ Աննա Դավթյանը: Սկզբում Ա. Դավթյանն անդրադարձավ արդեն ավանդույթ դարձած մրցույթ-խաղի 10-ամյա պատմությանը՝ տեղեկացնելով, որ դահլիճում ներկա է մրցույթի առաջին մասնակիցներից Ա. Նավասարդյանի թոռնուհին, տատի՝ Ա. Նավասարդյանի կնոջ՝ Հասմիկ Նավասարդյանի ուղեկցությամբ: Հանձնախմբի կազմում էին մրցույթի հարցերի հեղինակները՝ դպրոցի ուսուցիչներ:

☞8

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐՑԱԽ

ԱՐՑԱԽՅԻ ՄԱՐԶԻԿ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՆՎԱՃԵՑ

Վերջերս Մոսկվայում կայացած «Սամբոյի հիմնադիրների գավաթի» խաղարկության ժամանակ ոսկե մեդալ է նվաճել Հայաստանը ներկայացնող, մեծահասակների Եվրոպայի բրոնզե մեդալակիր, Աշխարհի գավաթի հաղթող, միջազգային մրցաշարերի մրցանակակիր, արցախցի մարզիկ Կարեն Սարգսյանը:

Կարեն Սարգսյանը Հայաստանի հավաքականի միակ մարզիկն է, ում հաջողվեց մեդալ նվաճել այս միջազգային մրցաշարում, այն էլ՝ բարձր կարգի՝ ոսկե մեդալ: Նա հանդես եկավ 58 կգ քաշային կարգում մարզական սամբոյի կազմում: Անցկացրել է երեք գոտեմարտ: Մեկնարկում 5:0 հաշվով հաղթել է ռուս մրցակցին: Հետո, վաղաժամ ձեռքի կոտրող հնարք կիրառելով, պարտության մատնեց Ղազախստանի ներկայացուցչին: Եզրափակչում էլ կրկին վաղաժամ, ոտքի ցավեցնող հնարքով հաղթեց մյուս՝ ռուս մրցակցին: Նրա խոսքով՝ ամենաբարդը առաջին գոտեմարտն էր: Ուրախ է, որ կարողացավ հաղթել ու բարձր պահել մեր երկրի պատիվը: Հայաստանի հավաքականը նրա այդ մեկ ոսկե մեդալի շնորհիվ զբաղեցրեց երկրորդ պատվավոր տեղը թիմային առաջնությունում:

Առաջին տեղը գրավեց ՌԴ-ն, իսկ երրորդը՝ Ղազախստանի հավաքականը:

Այս հաղթանակը պատահական չէր, սա բավականին երկար ու ծանր պարապմունքների արդյունքն է: Յուրաքանչյուր օր մարզիկը մի փոքր ավելի ուժեղ էր դառնում: Հատուկ շնորհակալություն է հայտնում անձնական մարզչին՝ Արմեն Ադամյանին՝ իրեն հավատալու, աջակցելու, ճիշտ ուղու վրա պահելու համար: Այս մրցաշարը առաջինն էր այս տարվա մեջ, որին մասնակցեց Կարենը ու հաղթեց եւ հույսով լցված է, որ ամբողջ տարվա ընթացքում էլ իրեն կհաջողվի հաղթել:

Կարենն ասում է, որ այս հաղթանակը իրեն նոր մոտիվացիա տվեց: Այս մրցաշարը շատ կարեւոր էր ոչ միայն իր, այլեւ սամբոյով զբաղվողների համար, քանի որ այն նվիրված էր մարզաձեւի հիմնադիրների պայծառ հիշատակին: Կարենի համար շատ մեծ պատիվ էր մասնակցել այս մրցաշարին ու հասնել ոսկե մեդալի: Նա համարում է, որ շատ կարեւոր է ունենալ մեծ կամքի ուժ եւ համառություն մինչեւ վերջ պայքարելու համար:

Կարեն Սարգսյանը Արցախի Շուշի քաղաքից է: 2023 թվականի սեպտեմբերին նա էլ ստիպված եղավ տեղահանվել ու բնակվել Երեւանում: Ասում է, որ ինչ էլ լինի, երբեք չի կարողանա համակերպվել այս դաժան իրողությանը՝ մեր դարավոր բնօրրանի կորստի հետ: Մինչդեռ հպարտ է, որ ներկայացնում է Հայաստանը եւ նրա պատվին միջազգային մրցահարթակում հնչում է հայկական հիմնը: «Ամեն ծանր մարզում, ամեն մի կաթիլ քրտինք մի նպատակ ունի՝ մի օր կանգնել պատվանդանին ու լսել քո երկրի հիմնը: Այդ պահին դու այլեւս միայն մարզիկ չես, դու քո դրոշն ես, քո պատմությունն ու քո ուժը»,- ասում է Կարեն Սարգսյանը:

Մոսկվայում կայացած «Սամբոյի հիմնադիրների գավաթի» մրցաշարին հաջորդեց Երեւանում կայացած «Սամբոյի աշխարհի գավաթի» խաղարկության մրցաշարը, որտեղ Կարեն Սարգսյանը նույնպես հանդես եկավ 58 կգ քաշային կարգում եւ կրկին նվաճեց ոսկե մեդալ: Իսկ մինչ այս երկու բարձրագույն մրցաշարերը, Կարենը մասնակցել էր ՀՀ սամբոյի առաջնությանը եւ նույնպես ոսկե մեդալի արժանացել: Փաստորեն հաշված օրերի ընթացքում Կարենը դարձավ եռակի ոսկեմեդալակիր իր փայլուն հաղթանակների շնորհիվ:

ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ 10 ԳԱՂՏՆԻՔ

Արցախցի մեր մարզիկները, մարզիչները, մարտարվեստների նվիրյալ հետեւորդները շարունակում են ոգեւորել մեզ իրենց աչքի ընկնող ձեռքբերումներով եւ իրենց նպատակներին անսահման նվիրվածությամբ: Նրանց հաջողությունը պատահական չէ, այլ համառ աշխատանքի, տոկունության եւ խորացված հոգեբանական պատրաստվածության արդյունք:

Դիտարկենք 10 գաղտնիք, որոնք մարզական Արցախի վառ դեմքերի հաջողության հիմքում են եւ հասկանանք, թե ինչ դասեր կարելի է քաղել նրանց փորձից՝ մեր սեփական նպատակներին հասնելու համար:

Նպատակասլացություն եւ մոտիվացիա

Լավագույն մարզիկներն իրենց առջեւ դնում են հստակ եւ պատվախնդրային նպատակներ: Նրանց մոտիվացիան ու նվաճումների հասնելու ձգտումը նրանց շարժիչ ուժն է:

Պարբերականություն եւ մարզումներ

Պարբերական մարզումները, մշտապես կատարելագործվելու եւ ֆիզիկական վիճակն ու հմտություններն անընդհատ զարգացնելու ձգտումը նրանց հաջողության հասնելու անբաժանելի մասն են:

Սթրեսների կառավարում

Մարզվողները սովորում են արդյունավետ կառավարել սթրեսները, տագնապները, որն օգնում է նրանց պահպանել բարձր արդյունավետություն ամենադժվար իրավիճակներում:

Անդադար կատարելագործում

Մարզաշխարհի մեր «գանձերից» յուրաքանչյուրը երբեք կանգ չի առնում ձեռքբերածի վրա: Նրանք անընդհատ փնտրում են ուղիներ իրենց հմտությունների եւ մոտեցումների կատարելագործման համար:

Աջակցություն եւ թիմ

Յուրաքանչյուր հաջողակ մարզիկի հետեւում պրոֆեսիոնալների թիմ կա՝ մարզիչներ, հոգեբաններ, ֆիզիոթերապեւտներ: Նրանք ստեղծում են աջակցության ու աճի մթնոլորտ:

Ճկունություն եւ հարմարվողականություն

Լավագույն մարզիկները պատրաստ են հարմարվել փոփոխություններին, լինել ճկուն եւ արագ փոխել իրենց մոտեցումը՝ կախված հանգամանքներից:

Գիտելիքներին եւ ուսանելուն ձգտելը

Հաջողակ մարզիկներն ու մարզիչներն անդադար սովորում են: Ուսումնասիրում են մարզանքի նոր մեթոդներ, վերլուծում են իրենց ելույթներն ու պարապմունքները եւ դասեր են քաղում ապագայի համար:

Դրական մտածողություն եւ վստահություն

Դրական մտածողությունը եւ ինքն իրեն հավատալը կարեւոր դեր են խաղում հաջողության հասնելու գործում: Սեփական ուժերին վստահ լինելը օգնում է հաղթահարել դժվարությունները:

Համբերություն եւ համառություն

Մարզաշխարհի կարկառուն ներկայացուցիչները գիտեն, որ հաջողությունն ակնթարթորեն չի գալիս: Նրանք պատրաստ են համբերել եւ շարունակել ջանքեր գործադրել՝ անկախ ժամանակից եւ դժվարություններից:

Ընդմիջումներ եւ հանգիստ

Հանգիստը եւ ուժերի վերականգնումը նույնչափ կարեւոր են, ինչքան մարզումները: Մարզիկները հասկանում են ինտենսիվ պարապմունքների եւ հանգստի միջեւ բալանսի կարեւորությունը: Ինչպես նաեւ շատ մարզիկներ եւ մարզիչներ կիրառում են հանգստացնող տեխնիկաների տարբեր ձեւեր, օրինակ՝ հոգեմկանային մարզումներ, շնչառական գիմնաստիկա, մեդիտացիա:

Եզրակացություն

Արցախցի մեր մարզիկների ու մարզիչների հաջողությունը ոչ միայն ֆիզիկական պատրաստվածության, այլեւ խորը հոգեբանական տրամադրվածության եւ ջանքերի արդյունք է: Նրանց փորձը կարող է ծառայել մեզ համար որպես լավագույն օրինակ մեր սեփական նպատակներին հասնելու եւ մեր ներուժը իրացնելու համար:

Հաճախ կարդացեք մեր մարզիկների ու մարզիչների մասին, հնարավորության դեպքում բաց մի թողեք նրանց հետ մոտիկից շփվելու հնարավոր պահերը: Դա կօգնի լինել ավելի մոտիվացված, նպատակասլաց, վստահ, եւ իհարկե հիացմունքի զգացողություններ կտան:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Արմեն Պետրոսյան



Արման Ավանեսյան

Տիգրան Գեւորգյան

Արթուր Առուշանյան

Դավիթ Հայրապետյան

Անդրանիկ Գրիգորյան

Էրիկ Առստամյան



Հայկ եւ Դավիթ Խաչատուրյաններ

Մանվել Պետրոսյան

Սայաթ Բաղդասարյան

ԳՐԱԿԱՆ ԱՐՑԱԽ

Կիմ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՄԻԹՈ



- Չարացա՞ծ ես, Միթո՛:

- Չէ՛, քթիս տակ երգում եմ:

- Բայց երգիդ մեջ հայհոյանք կա:

- Է՜, հայհոյանքը բառ չի՞, երգը բառերով չի ասվո՞ւմ: Ասացի՝ երգում եմ:

- Ինչի՞ մասին ես երգում, Միթո՛:

- Քեզ համար մեկ չի՞, երգում եմ:

- Այդ երգն ինձ էլ սովորեցրու, ես էլ եմ ուզում հայհոյել:

... Եվ Միթոն, ուշադիր հայացքը ոչնչի վրա, շարունակում է իր գործը: Նրա գործը վարսավիրությունն է: Այնտեղ՝ հայրենի քաղաքում, նրա մկրատը միշտ խրոխտ էր ղըրթում, մատների խաղը աշխույժ էր, ինչպես աչքերի ուրախ վազքը ակնապիճերում: Հաճախորդները սովորաբար շատ էին լինում, սակայն Միթոն տետրակի մեջ չէր հերթագրում նրանց, ինչպես դա անում էին մյուս վարսավիրանոցներում: Ծանոթ-անծանոթ՝ Միթոն գրանցում էր ուղեղի անգույն տետրակում և սպասարկում էր բոլորին գերմանական ճշտապահությամբ: Խորհրդային բանակում ծառայելու վայրը Գերմանիան էր՝ ГСВГ-ն, ինչպես ինքն էր սիրում շեշտել: Ասում էր՝ գերմանացիները լավ ազգ են, միայն թե հայերին չեն սիրում: Թե ինչու չեն սիրում, Միթոն չէր մանրամասնում, երևի հիմքեր ուներ այդպես մտածելու:

Վարսավիրանոցի ամենաակտիվ այցելուն թերևս Ռոզիսկի Մավոն էր՝ հատուկ ծառայության աշխատակիցը, ում համար հետաքրքրության օբյեկտ էին միայն վարսավիրանոցի այցելուները: Մտնում էր՝ բեղերի վրա մի անբացատրելի ժպիտ, ճռճռալով նստում հին բազմոցի մեջտեղը.

- Ի՞նչ կա, Միթո՛:

- Բա՛ն չկա:

- Նոր բան չկա՞:

- Ասում են՝ Զորիկը կնոջը բռնացրել է սիրեկանի հետ:

- Դա գիտեմ,- դեմքը կնճռոտում էր Մավոն,- ուրիշ ի՞նչ կա: Ասում են՝ քաղաքում մախորկի նոր պարտիա է ֆռռում, տեղյակ չե՞ս, բան չեն խոսո՞ւմ:

«Մախորկան» թմրանյութն էր, Միթոն դա գիտեր: Նա մոլի ծխող է, ճիշտ է, բայց երբեք թմրանյութ չի օգտագործել: Երբ Ֆիզուլիում ոտքից վիրավորվեց, հոսպիտալում վիրահատեցին առանց անզգայացման: Ասին՝ վերքը խոր չէ, կարիք չկա օրգանիզմդ մորֆիին ընտելացնես: Ատամները ցավից սեղմած՝ լուռ համաձայնվեց: Հաջորդ պատերազմում, արդեն Շուշիի մերձակայքում, ուսից վիրավորվեց: Խառը իրավիճակ էր. հենց տեղում ընկերը՝ Սոսը, վիրակապեց: Ասաց՝ ցավը մեղմող դեղ ունեմ, տամ խմե՞ս: Ասաց՝ չէ, օրգանիզմս սովոր չէ, յոլա կգնամ առանց դեղի:

Ռոզիսկի Մավոն թեև չէր հաջողացնում օպերատիվ տվյալներ կորզել Միթոյից, սակայն համառորեն օրումեջ գալիս էր նրա մոտ թրաշվելու: Վարսավիրանոցի այցելուներից շատերը գիտեին նրա գալու իրական պատճառը, բայց վստահ էին, որ Միթոն ոչ ոքի չի ծախում: Նրա մոտ ամեն ինչի մասին խոսում էին, ամեն կարգի գաղտնիք բացում էին, իսկ Միթոն իր բնույթին հավատարիմ՝ միշտ խլականջ էր: Դրա համար էլ պաշարման օրերին հավատարիմ այցելուները Միթոյի համար դժվար ճարվող ծխախոտ էին բերում, և Միթոն նրանց մանրամասն սպասարկում էր մկրատի խրոխտ ղըրթոցով:

Երբ փախեփախն ընկավ, հեռումոտ գյուղերից եկել, լցվել էին քաղաքի խեղճացած փողոցները, և մինչև վերջին պահը Միթոն վարսավիրանոցը բաց էր պահում այցելուների համար: Տնեցիները թոնթորում էին՝ բոլորը գնացին ու գլուխներն ազատեցին, Միթո՛, մենք մնացինք: Ձեռքը թափ էր տալիս. վարսավիրանոցը քաղաքի բանուկ մասում էր, գլխավոր փողոցը դեռևս շարունակում էր մարդկանց առատությունից բազմաձայն խլթխլթալ: Բջջային կապը դեռ գործում էր, և սահմանային կամուրջ հասնողներն այնտեղից տեղեկացնում էին՝ սահմանին զզվելի հերթ է, թուրքերը բոլորին անխտիր ստուգում են, հետո բաց թողնում:

Տնեցիները վախենում էին, որ սահմանային կամուրջը հանկարծ կարող է փակվել, ու իրենք պատանդ կմնան թուրքերին: Այդ մտավախությունը շատերի մոտ էր, և դա անհիմն չէր: Հարևանի հարսը՝ Օֆան, որ մեկ տարեկան երեխային գիշեր-ցերեկ գրկից չէր իջեցնում, հարևանների ներկայությամբ ասել էր՝ ջհանդամը, թե մեզ կսպանեն, միայն թե թուրքավարի խայտառակ բաներ չանեն: Միթոն գիտեր, շատերի տներում մարտական հրազեն կա, և եթե թուրքը փորձի մտնել բակերը, կռվելու են մինչև վերջին փամփուշտը: Ռոզիսկի Մավոն էլ էր համարյա նույն բանն ասել ու ավելացրել էր՝ դիրքերում տղերքին չեն թողել կռվեն, պահանջել են զենքերը հանձնել ու հեռանալ: Կռվողների մեծ մասը, ինչքանով ինքն էր տեղյակ, հրաժարվել էր զենքը խաղաղապահներին հանձնել, բերել, բաժանել էին հարևաններին: Նրանք իրենց հետ նաև սպանված թուրքերի զենքեր էին բերել, որոնք լրիվ նոր էին, համարյա՝ չկրակած: Ռոզիսկի Մավոյի համար այս տեղեկություններն այլևս օպերատիվ նշանակություն չունեին, նա արդեն վառել էր հատուկ ծառայության աշխատակցի վկայականը, որ թուրքերը չիմանան իր ով լինելը: Ինչքա՜ն շատ էր սիրում այդ վկայականը: Գիշերը քնելիս, այն երբեմն բարձի տակ էր պահում:

Միթոն, տնեցիներից ու հաճախորդներից թաքուն, վարսավիրանոցի ճռճռացող բազմոցի տակ յուղած ինքնաձիգ էր պահում՝ երեք պահունակներով, որոնք համադասարանցի Լյական էր տվել իրեն: Նա որոշել էր ընտանիքի հետ ամենավերջում լքել քաղաքը, որովհետև, վստահ էր՝ գաղթի միակ ճանապարհը խցանված է, երբը դանդաղ է առաջանում:

Վարսավիրանոցի դուռը միշտ բաց էր, և գաղթի վերջին օրերին փախստական մի ընտանիք եկավ՝ երեք վախվորած մանչուկներով: Ընտանիքի տղամարդը, մորուքը մինչև ականջներն աճեցրած, ասաց՝ եղբա՛յր, մնալու տեղ կտա՞ս, մինչև մեր գյուղացիք լրիվ հավաքվեն:

Միթոն զգացված ասաց.

- Համեցե՛ք, եղբա՛յր, մի կերպ տեղավորվեք: Զուգարան էլ կա, ջուր էլ:

Ջուրը, սակայն, խմելու համար պիտանի չէր, քանի որ քաղաքի զտիչ կայանն արդեն չէր աշխատում: Շենքերի բարձր հարկերն այլևս ջուր չէին ստանում, և Միթոն ճարահատ օրը մի քանի անգամ կանիստրով ջուր էր բարձրացնում հինգերորդ հարկ՝ տնեցիների կարիքները հոգալու համար: Հարցրեց.

- Որտեղացի՞ եք, եղբա՛յր:

Մարդ ու կին համարյա միաձայն պատասխանեցին՝ Գետավանի՛ց, եղբա՛յր:

Գետավանից ու շրջակա գյուղերից թուրք ասկյարների միջով եկել էին՝ մի մասը սպանվելով, մի մասը՝ ծեծվելով ու ծանակվելով: Միթոյի աչքերում քարի կտորի նման ծանր արցունքներ կային: Աղմուկով փռշտաց, ու ափերը տաք թրջվեցին: Ասաց.

- Երեխեքը սոված կլինեն, եղբա՛յր, գնամ տնից ուտելիք բերեմ, թեպետ մերոնք էլ երևի ուտելու բան չունեն:

- Չէ՛,- մարդ ու կին համարյա միաձայն արձագանքեցին,- սոված չեն, շնորհակալ ենք, եղբա՛յր:

Միթոյի կինը՝ Անժելը, զանգեց, մղկտաց՝ Մաշինկա քեռակինը ճանապարհին մահացել է, Հին շենի մոտ: Ուզում են գյուղում թաղեն: Թաղե՞ն:

Հարցրեց.

- Խոսե՞լ ես հետները, Հայաստան տանելու հնար չկա՞:

Կինը հեռախոսի մեջ լուռ լաց եղավ՝ չէ, չկա:

Ասաց.

- Թող Հին շենի տներից մեկի այգում հուղարկավորեն, գյուղի հանգստարան չտանեն:

Ասաց.

- Հանգստարանի տարածքում կարող է ասկյարներ լինեն, թաղվորներին հանկարծ գերի չվերցնեն:

Աշնանային օդը տամուկ ու մաքուր էր: Լքված սարերից իջած թրքահոտը միջանցիկ քամու պես սկսել էր տիրաբար վազվզել քաղաքի քթանցքներում: Հորիզոնի երևացող շերտերում լուռ ողբ կար, որը նկատելու չէին տալիս քաղաքում մնացածները:

Երբ իրենց ու հարակից շենքերը բնակիչներից լրիվ դատարկվեցին, կինը սկսեց թսթսալով լաց լինել.

- Միթո՛, բոլորը գնացին, մենք մնացինք:

Կնոջ արցունքներն այս անգամ հուզեցին: Նույն երեկոյան թեթև շորեր բեռնեցին լողվա համարանիշով քսանհինգ տարին բոլորած իր «Մերսեդեսը» ու քաղաքից մեկնեցին: Ավտոմեքենայի բեռնախցիկում նաև վարսավիրի գործիքներն էին: Կնոջը բացատրեց՝ դրանց մեջ հաց կա, ապրուստ կա, մեզ հետ տանենք:

Թուրք սահմանապահն էլ գիտեր, որ վարսավիրի գործիքների մեջ հաց կա, բայց հարցրեց.

- Ի՞նչ զենքեր են դրանք:

Ասաց՝ բեղ թրաշելու զենքեր են: Կուզե՞ս թրաշեմ:

Թուրք սահմանապահը բեղերը ազրբեջաներեն շոյեց, քռքռաց.

- Հայի ածելին իմ բեղերը չի բաշարի կտրել: Կտանես ձեր ղեկավարի մորուքը կխուզես, այլապես մենք ենք դա անելու:

Միթոն ասաց՝ գյոզում ույստա: Եվ թուրք սահմանապահը նորից գոհ քռքռաց.

- Գնացե՛ք,- այս անգամ ռուսերեն ասաց,- էլ ետ չգաք:

Միթոն մտքում հայհոյեց նրան հայերեն, ռուսերեն, թուրքերեն և նույնիսկ՝ գերմաներեն: Նորակառույց ճանապարհը սև օձի պես սողում էր վերևի գյուղի ուղղությամբ: Մինչև հայկական բնակավայր հասնելը նա մտքում հա՜ հայհոյում էր հասցե-անհասցե:

***

- Չարացած ես երգում, Միթո՛:

- Բառերով եմ երգում:

- Բառերդ լրիվ հահոյանք են:

Հայհոյանքը բառեր չե՞ն:

Միթոն, ուշադիր հայացքը ոչնչի վրա, մկրատը հոգնած ղրթացնում էր: Ուզում էր վանածորցի իր այցելուին ասել՝ սա հայրենիքից բերված ամենաթանկ երգն է: Ամեն բառի մեջ, նույնիսկ՝ հայհոյանքի, անասելի ցավեցնող կարոտ կա, որը դժվար թե Տարտարոսի անդունդը չանցած որևէ մեկը կարողանա հասկանալ:

ԱՐԴԵՆ՝ 10-ՐԴ ԱՆԳԱՄ

6☜ Թիվ 196 հիմնական դպրոցը տնօրինում է Ա. Նավասարդյանի ավագ դուստրը՝ Անուշ Նավասարդյանը, որը նաև մրցույթ-խաղի հանձնախմբի նախագահն էր:

Խաղը բաղկացած էր վեց ոլորտից՝ «Աշոտ Նավասարդյան», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Մայրենի», «Սպորտ» և «Իմ հայրենիք»: ՀՀ օրհներգը հնչելուց հետո սկսվեց մրցույթը, որն անցավ բավականին աշխույժ, լարված: Աշակերտները հատկապես լավ էին պատասխանում «Աշոտ Նավասարդյան» և «Իմ հայրենիք» ոլորտների հարցերին: Մոտ 3 ժամ տևած մրցույթ-խաղն անցավ, ինչպես հնչեց դահլիճում՝ խելքի, մտքի, գիտելիքի, անխախտ հավատի և հաղթանակի շնչով: Հաղթանակի, որին շատ էին ուզում հասնել մասնակից դպրոցականները: Դպրոցի ֆեյսբուքյան էջում ասված է. «Արդար, ազնիվ ասպետական սերունդն է երջանիկ կյանքի երաշխավորը, Հայաստան աշխարհի և հայի հարատևման առհավատչյան: Արդեն ավանդույթ դարձած «Նավասարդյանական ասպետ» խաղ-մրցույթը բացի գիտելիքի դրսևորումից, իր մեջ անսահման հուզմունք, սեր, հավատ, հույս և լույս է ամփոփում, որը յուրատեսակ հարգանքի տուրք է բոլոր նրանց, ովքեր ապրեցին, չվախեցան, պայքարեցին ու նահատակվեցին հանուն հայրենյաց և հանուն արդարի»: Մրցույթ-խաղի վերջնամարտում բոլոր թիմերը հաղթեցին. կարևորը՝ լավ էին պատասխանում հարցերին: Յուրաքանչյուր աշակերտ պատասխանատու էր մի ոլորտի համար, սակայն կարևորվում էր ընդհանուր կարծիքը, միասնական միտքը:

Ինչպես ընդունված է մրցույթ-խաղի վերջում, երբ ամփոփվում են արդյունքները, դպրոցականներին իր մայրական օրհնանքն է տալիս Ա. Նավասարդյանի կինը՝ Հ. Նավասարդյանը, որը մշտապես եղել է ամուսնու աջակիցը, գաղափարակիցը, տարիներով սպասել է նրա վերադարձին: Իր խորհուրդը տվեց նաև աշակերտների ծնողներին, որոնք ներկա էին և հետևում էին իրենց երեխաների խաղին: Իր սաներին շնորհավորեց ու բարին մաղթեց կրթօջախի տնօրեն Ա. Նավասարդյանը:

Կայացավ հիշարժան ևս մեկ միջոցառում, որի մասին դեռ շատ կհիշեն հատկապես մասնակից դպրոցականները, որոնք «Կողքինդ ո՞վ է» հարցին արդեն գիտեն պատասխանել. «Ես եմ...»:

Ջոհրաբ ԲՈՔՈՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 27.04.2026թ.: